# Azg
Azg
armenian daily

Ապրիլ
2
Ուրբաթ
1993

ՈՒՍՈՒՄՆԱՐ
ԱԶԱՏԱՄԱՐՏ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիւ 60 (311)
գինը՝ 5ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ ... ՀԱՍՍՀ-ԱԳԻՊՏՈՅԻ Ս. ... Մ. Ա. Մ...

Աշխարհ

## Իսրայելական հարձակում Լիբանանի վրա

Հոկտեմբերի լույս հինգշաբթի գիշերը խիստ ակտիվ էին իսրայելական բանակի ուղղաթիռներն ու ռազմանավերը: Դրանք անակնկալ հարձակում գործեցին Լիբանանի հարավային եւ հյուսիսային շրջանների վրա, ռմբակոծելով բազմաթիվ բնակավայրեր: Ավելի անակնկալը ռազմանավերի հարձակումն էր Լիբանանի հյուսիսի նավահանգիստ Տրիպոլիի մոտ գտնվող Բարեդ գետի ափի պաղեստինյան գաղթականության վրա, որ ռմբակոծվեց մի քանի ժամ շարունակ: 1982 թ. ի վեր այն չէր ռմբակոծվել: Մյուս կողմից, արաբ իսրայելական բանակցություններում պաղեստինցիների ներկայացուցիչներից Հանան Աշրաուին երեկ հայտարարեց, թե գրավյալ հողերի շուրջ հաստատված շրջազգայության արգելքի հետեւանքով տասնյակ հազարավոր պաղեստինցիներ չեն կարողանում ափխատանքի դուրս գալ Իսրայել: Նախորդ օրը իսրայելական ոստիկանությունը Արեւմտյան ափում եւ Գազայում ձերբակալել էր ավելի քան 500 պաղեստինցու, շրջազգայության արգելքը խախտելու մեղադրանքով: Վերջինները Ռաբինի կառավարությանը զգուշացրին, որ նման միջոցառումները պարզապես ափիթ կտան նոր խոսովություններ, քաջալերելով արաբ իսրայելական բանակցությունների ընդդիմադիրներին:

## Կարաջիչը դատապարտում է ՄԱԿ-ին

14 կողմ եւ 1 ձեռնպահ (Չինաստան) ձայնով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը որոշեց ամբողջ Բոսնիան թաղիքազերծ գոտի հայտարարել, ՆԱՏՕ-ի ինքնաթիռներին արտոնելով պատժել չենթարկվող օդանավերին: Այնուամենայնիվ, Անվտանգության խորհուրդը ընդառաջեց Ռուսաստանի պահանջին եւ հրաժարվեց սերբական օդանավակայանները կանխարգելիչ ռմբակոծման ենթարկելու ծրագրից: Այսպիսով, առաջին անգամ է, որ Անվտանգության խորհուրդը թույլատրում է գինված միջամտություն կատարել Բոսնիայում, ինչը խոր դժգոհությամբ դիմավորվեց բոսնիացի սերբերի ղեկավար Ռադովան Կարաջիչի կողմից: Վերջինս խորհրդին մեղադրեց կողմնապահության մեջ: Որոշումը, ըստ նրա, պատժում է միայն սերբերին: Կարաջիչն անցյալ շաբաթ Նյու Յորքում մեկնել էր ստորագրել Օուենի եւ Վենսի կողմից մշակված խաղաղության տակ, որ Բոսնիան բաժանում է 10 էթնիկական մասերի: Անվտանգության խորհրդի ներկայորոշումը ճնշման միջոց է նկատվում Կարաջիչի վրա այն ստորագրել տալու համար: Իսկամ եւ խորքաբ ներկայացուցիչները ստորագրել էին այն:

## Սիցիլիական մաֆիան եւ քաղաքական շրջանակները

Իտալիայի Գերագույն դատարանը սկսեց ուսումնասիրել իրեն հղված մի տեղեկագիր, որը հաստատում է սիցիլիական մաֆիայի եւ երկրի քաղաքական գործիչների միջեւ գոյություն ունեցող կապերը: Տեղեկագիրն ահազանգում է, թե կազմակերպված հանցագործությունը հետամուտ է քաղաքական նորանոր կապեր ստեղծելու գործին: Այս ուղղությամբ նոր հնչեղություն է ստացել Իտալիայում, երկրի ամենանշանավոր քաղաքական գործչի՝ նախկին վարչապետ Ջուլիո Անդրեոտտիի դատական ծանուցագիր ստանալուց հետո. Գերագույն ատյանը երեկ սկսեց քննել նաեւ հարավային շրջանների 5 դատավորների պարագան, որոնք նույնպես մեղադրվում են մաֆիայի հետ սերտաձելու մեջ: Վարչապետ Ամատոն երեկ հայտարարեց, թե սկանդալների հետեւանքով իր կառավարությունը գործնականում վերածվել է «հոգատար վարչության»:

## Չինաստանը նախապատրաստվում է Հոնկոնգի կցման

Ի պատասխան Հոնկոնգի կառավարիչ Փեթրընի վերջին քայլերին, որոնք ծգտում են քաղաքը 1997 թ. Չինաստանին վերադարձնելուց առաջ ժողովրդավարական սահմանադրությամբ օժտել այն, Չինաստանի ժողովրդի ազգային կոնգրեսը (խորհրդարան) բացարձակ մեծամասնությամբ որոշեց ստեղծել հանձնաժողով, որ կնախապատրաստի Հոնկոնգի փոխանցումը Մեծ Բրիտանիայից Չինաստանին: Հետաքրքրական է, որ 20 հոգանոց այդ հանձնաժողովի 15 անդամները հրավիրված են Հոնկոնգից: Դրանք առավելաբար ռեակցիոնական քաղաքական գործիչներ են, որոնք նախկինում հանդես գալիս էին Պեկինի հետ:

Կարծիք

# ՔԵԼԲԱՋԱՐԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

## *Լաչինի միջանցքի հյուսիսում նոր հաջողություններ*

Հաջողությամբ շարունակելով մի քանի օր առաջ սկսված հակահարձակումը, ապրիլի լույս 1-ի գիշերը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը Քելբաջարի շրջանի տարածքում լոեցրել են բշնամու եւս մի քանի կրակակետեր: Ադրբեջանական կազմավորումները շարունակում են խուճապահար նահանջել մարտադաշտում թողնելով մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ: Ադրբեջանական կազմավորումները չեն կարող որեւէ օժանդակություն ակնկալել, քանի որ հայկական կազմավորումները վերահսկում են Խանլար-Քելբաջար ավտոճանապարհը: Ստեփանակերտ են հասցվել գերի հանձնված մի քանի տասնյակ ադրբեջանցի զինվորներ:

Նույն աղբյուրները հայտնում են, թե կատաղի մարտերը չեն դադարում նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիսային մասերում, որտեղ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը, կատեգորիկորեն բշնամու գրոհը, անցել են հակահարձակման եւ ոչնչացրել բշնամու կրակակետերը Ղոչազ, Տիգիկ, Հարթաջեր, Վաղազին եւ Թազաբեկ բնակավայրերում: Մանրամասնությունները ճշտվում են:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները ընդունում են, թե հայկական կազմավորումները մարտերով առաջ են շարժվում եւ ներկայումս գտնվում են Քելբաջար շրջկենտրոնից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Նրանք տեղեկացնում են նաեւ, թե շրջանի խաղաղ բնակչությանն էվակուացնելու հնարավորություն չկա, առայժմ հաջողվել է ուղղաթիռներով դուրս բերել միայն 300-400 ծերերի, կանանց եւ երեխաների: Ադրբեջանական աղբյուրները շարունակում են ընդգծել, թե Քելբաջարի շրջանում մարտական գործողություններին մասնակցում է նաեւ Հայաստանի բանակը, որն իբր ներխուժել է շրջանի տարածք Վարդենիսի կողմից:

### Մարտեր Ֆիզուլու եւ Մարտունու սահմանագլխին

Իրադրությունը կտրուկ սրվել է նաեւ ռազմաճակատի այս հատվածում, որտեղ երեկ առավոտյան ուժգին հրետակոծության են ենթարկվել Մարտունու շրջանի Կարմիր Շուկա ավանը եւ Շեխեր գյուղը: Կան զոհեր եւ վիրավորներ: Միաժամանակ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը կասեցրել են ադրբեջանական բանակի գրոհը Ուրյան բարձունքի ուղղությամբ: Հայկական կողմից տուժածներ չկան: «Ազգ»

## Ո՞ՒՄ Է ՁԵՌՆՏՈՒ ՔԵԼԲԱՋԱՐԻ ՇՈՒՐՋ ԱՂՄՈՒԿԸ

Վերջին մի քանի օրերի ռազմական գործողություններ Լեռնային Ղարաբաղում բնորոշվում են լարվածության որոշակի թուլացմամբ Մարտակերտի շրջանի արեւելյան հատվածում եւ շրջկենտրոնի ուղղությամբ, ինչպես նաեւ ադրբեջանական բանակի աննախադեպ լայնածավալ գրոհներով Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիսային հատվածում: Այս ամենն, իհարկե, սպասելի էր, եւ դեռեւս ձմռանը ռազմական դիտորդները միահամուռ այն կարծիքն էին հայտնում, թե պատերազմական գործողությունների ժամանակավոր դադարը պետք է բացատրել միայն ձմեռային աննպաստ եղանակով:

Տես էջ 2

ԿԳՀ

## ՊՊԿ նախագահի հայտարարությունը

*Մարտի 31-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ.*

1993 թ. մարտի 27-ին Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության պետական կոմիտեն հանրապետության զինված ուժերին հրամայեց ադրբեջանական բանակի վերսկսված գրոհներից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի եւ սահմանների պաշտպանությունն ապահովելու համար ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները:

Սկսած մարտի 20-ից, Ադրբեջանը սասկացրել էր Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմը, եւս մեկ անգամ հաստատելով խնդիրը ռազմական ուժով լուծելու իր քաղաքականությունը: Ադրբեջանը գործողություններ նախաձեռնեց Մարտակերտի շրջանում, ինչպես նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի երկու կողմերում հակառակ մարտի 1-ին Հռոմում համաձայնեցված ԵԱՀԽ-ի փաստաթղթի ոգուն:

Գործելով օրինական ինքնապաշտպանության շրջանակներում Լեռնային Ղարաբաղի բանակը ազատներին ետ շրջեց իր սահմաններից, ապահով լինելու համար, որ ադրբեջանական բանակը հետագայում մեր հանրապետության արեւմտյան սահմանների ավերման պատճառ չի դառնա:

Պաշտպանության պետական կոմիտեն իր դաշտային հրամանատարներից տեղեկացել է, որ ադրբեջանական բանակը դիմադրելու սկզբնական փորձից հետո նահանջել է, թողնելով այդ տարածքը, որ հիմնականում բնակեցված չէր: Լեռնային Ղարաբաղի բանակը տարածում գտնվող քաղաքացիների կյանքը պաշտպանելու եւ այդտեղից հեռանալ ցանկացողների անվտանգ ելքն ապահովելու խնդիր հրաման էր ստացել:

Դաշտային հրամանատարները հաղորդել են նաեւ, որ անցած տարի Լեռնային Ղարաբաղի հյուսիսային մասի գավթման ընթացքում Մարտակերտի գյուղերից ադրբեջանցիների կողմից գողացված տնային իրերի մեծ մասը հայտնաբերվել է այդ տարածքում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ցավում է պատերազմի այս նոր էսկալացիայի համար եւ ողջ պատասխանատվությունը դնում Ադրբեջանի վրա, որը մերժում է բանակցությունների միջոցով լուծում գտնելու ուղին, որին մինչեւ այժմ հաջողվել է վերադարձնել ԵԱՀԽ շրջանակներում զինադադարի բոլոր ջանքերը:

Լեռնային Ղարաբաղի իշխանություններն ամեն ինչից վեր են դնում ժողովրդի անվտանգությունը եւ ողջունում են յուրաքանչյուր քայլ, որը կարող է հանգեցնել անհապաղ եւ առանց նախադայմանների զինադադարի, որը չի վտանգում հանրապետության ժողովրդի անվտանգությունն ու կյանքը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
Պաշտպանության պետական
կոմիտեի նախագահ

Բարու

## Ադրբեջանը զոհի կեցվածք է ընդունում

Քելբաջարի շրջանում ռազմական գործողությունների կաղակցությամբ Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայությունը երեկ հանդես է եկել մի հայտարարությամբ, որտեղ հայտնվում է, թե հայկական կազմավորումների լայնածավալ գրոհի հետեւանքով Լաչինի եւ Քելբաջարի շրջաններում գրավվել է մոտ 30 գյուղ, ազատվել մի քանի տասնյակ խաղաղ բնակիչ:

Ըստ փաստաթղթի, Հայաստանը պետական մակարդակի է հասցրել տարածքային նվաճումների քաղաքականությունը, միջազգային իրավունքի նորմերի խախտումը, ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների ոտնահարումը եւ այլն: Ըստ Բաքվի, այդ ամենին նպաստում է այն, որ ՄԱԿ-ը եւ ԵԱՀԽ-ն առ այսօր հայ-ադրբեջանական հակամարտության մեջ ագրեսորին բացահայտելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկել:

Ադրբեջանի իշխանությունները դիմել են ՄԱԿ-ին, ԵԱՀԽ-ին, Իսլամական համաժողով կազմակերպությանը՝ կոչ անելով վճռականորեն դատապարտել Հայաստանի քաղաքականությունը: «Ազգ»

Ստեփանակերտ

## ԼՂՀ ԳԽ կոչ է անում Ադրբեջանին

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը դիմել է Ադրբեջանի խորհրդարանին, ադրբեջանական ժողովրդին Ղարաբաղի դեմ գինված հարձակումը դադարեցնելու կոչով: Հայտարարության մեջ մասնավորապես նշվում է, որ Ադրբեջանի ղեկավարությունը ոչնչացրեց բանակցությունների միջոցով լուծում գտնելու ուղին, որին մինչեւ այժմ հաջողվել է վերադարձնել ԵԱՀԽ շրջանակներում զինադադարի բոլոր ջանքերը:

Լեռնային Ղարաբաղի իշխանությունները ամեն ինչից վեր են դնում ժողովրդի անվտանգությունը եւ ողջունում են յուրաքանչյուր քայլ, որը կարող է հանգեցնել անհապաղ եւ առանց նախադայմանների զինադադարի, որը չի վտանգում հանրապետության ժողովրդի անվտանգությունն ու կյանքը:

ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
Պաշտպանության պետական
կոմիտեի նախագահ

Իջեւան

## Կիրանցում զոհվեցին երկու խաղաղ բնակիչ

Ապրիլի լույս 1-ի գիշերը Ադրբեջանի տարածքից տանկերից եւ ծանր հրետանուց հրետակոծվել է Իջեւանի շրջանի Կիրանց գյուղը, որի հետեւանքով զոհվել է երկու խաղաղ բնակիչ: Այս մասին տեղեկացնում են Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից: Միաժամանակ հրետակոծվել է նաեւ Կրասնոսելսկի շրջանի Վահան գյուղը, որի հետեւանքով զինվորներից մեկը վիրավորվել է: Երկու դեպքում էլ հայկական ուժերը դիմել են պատասխան համարժեք գործողությունների: Ադրբեջանական կողմից տուժածների մասին տեղեկություններ չկան: «Ազգ»

**Մարտի 31-ին Տաջիկստանի խորհրդարանի նախագահ է Ռահմոնովը. նրա տեղակալները, վարչապետ Ա. Աբդուլջոջանովը** մասնակցեցին Տաջիկստանի ժողովրդական ճակատի նախագահ Ս. Սաֆարովի եւ դաշտային հրամանատար Ֆ. Սաֆդովի հուղարկավորությանը, որոնք զոհվել էին նախորդ օրը Տաջիկստանի Խաչանի մարզում տեղի ունեցած փոխհրաձգության ժամանակ: Իրավապահ մարմինները ոչինչ չեն հաղորդում նրանց մահվան իրական դրդապատճառների մասին, նշելով, թե հետաքննությունը դեռ չի ավարտել: Ոչ պաշտոնական վարկածով, նրանք զոհվել են իրենց միջեւ վեճի պատճառով, որի ժամանակ զենք է օգտագործվել: ԻՖ

digitised by A.R.A.R.@

Պատերազմ

# Ո՞ՒՄ Է ՁԵՌՆՏՈՒ ՔԵԼԲԱՋԱՐԻ ՇՈՒՐՋ ԱՂՄՈՒԿԸ

*Լրատվության միջոցներն առաջ են ընկնում*

Սկիզբը էջ 1

Բայց, ինչպես ասում են, տարբը ուրբաթից ուս եկավ՝ հասկանալով, որ ադրբեջանական բանակի սպասվելիք հարձակումների հիմնական սլաքներից մեկն ուղղված է լինելու Լաչինի մարդասիրական միջանցքի վրա. ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը դեռևս փետրվարին կարողացան ազատագրել Մարտակերտի շրջանի մի շարք բնակավայրեր և վերահսկել Թարթառ-Մարտակերտ-Քելբաջար ճանապարհը: Այլ կերպ ասած, ժամանակավորապես բուլացվեց Լաչինի միջանցքի հյուսիսային մատույցների վրա ադրբեջանցիների ճնշումը. որովհետև հենց այդ ճանապարհով էր ադրբեջանական բանակը ղարբեռաբար համալրվում ինչպես ռազմական տեխնիկայով, այնպես էլ մարդուժով:

Բայց գոյություն ունի Քելբաջարն Ադրբեջանին կապող երկրորդ ճանապարհը ևս՝ այն Քելբաջարը միացնում է Խանկանդիին ու, ի տարբերություն առաջինի, ձմռան ամիսներին չի գործում: Ցմեռը վերջացավ, ու դատահական չէ, որ վերջին շաբաթվա ընթացքում ռազմաճակատից եկող հաղորդագրությունները վկայում են, թե Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիսային մատույցների վրա ադրբեջանական բանակի լայնածավալ հարձակումներին մասնակցում են մի քանի տասնյակ միավոր զրահատեխնիկա, մեծ քանակությամբ ծանր հրետանի և հետևակ: Վերջին օրերին իրադրությունը ռազմաճակատի այս հատվածում այնքան լուրջ էր, որ մինչև անգամ խախտվել էր Հայաստանի և Ղարաբաղի կայուն հաղորդակցությունը Գորիս-Ստեփանակերտ ճանապարհով: Այլ կերպ ասած, վտանգի տակ էր ոչ միայն միջանցքը, այլև Լեռնային Ղարաբաղի երիտասարդ հանրապետության բուն գոյությունը:

Միաժամանակ ադրբեջանական կազմավորումները լայնածավալ գրոհներ էին ձեռնարկում նաև Մարտակերտի շրջանի արևմտյան ուղղությունների ուղղությամբ՝ փորձելով շրջանն անջատել Ղարաբաղից: Հենց ռազմաճակատի այս հատվածում է, որ Ղարաբաղի բանակը շոշափելի հաջողություններ հասավ՝ ետ շրջելով բշնամուն, լոնեցնելով բշնամու մի շարք կրակակետեր Քելբաջարի շրջանի տարածքում և վերահսկողության տակ առնելով Քելբաջար-Խանկանդի ճանապարհը, դրանով իսկ փրկելով Լաչինի մարդասիրական միջանցքը: Ահա և ամբողջը:

Բայց արդեն երեկ առավոտյան միջազգային զանգվածային լրատվության միջոցներն աշխարհով մեկ հայտարարեցին, թե հայկական կազմավորումներն իբր արդեն գրավել են Քելբաջար շրջկենտրոնն ու շրջանի մոտ 30 գյուղեր, իսկ ավելի վաղ, մարտի 31-ին Ադրբեջանի նախագահի պետական խորհրդական Վաֆա Գուլիզադեն Ադրբեջանում ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ռուսաստանի և Իրանի դեսպաններին, ինչպես նաև ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ներկայացուցչին ներկայացրեց Քելբաջարի շրջանի ծայրաստիճան լարված իրադրությունը տեղեկացնելով, թե շրջապատման մեջ են հայտնվել մոտ 60 հազար խաղաղ բնակիչներ, ու հայտարարելով, թե դատերազմը մտել է հատկապես վտանգավոր փուլ:

Ակնհայտ է, որ այս ամենն ադրբեջանական քարոզչական մեքենայի հերթական կեղծիքն է՝ մի կողմից ասվում է, թե Քելբաջարի շրջանում լիովին շրջապատվել են մոտ 60 հազար խաղաղ բնակիչներ (այդ շրջանում խաղաղ բնակչություն չկա արդեն շուրջ 3 տարի), մյուս կողմից հայտարարվում է, թե Հայաստանի և Ղարաբաղի զինված ուժերի միջև, որոնք իբր փորձում են երկու կողմից փակել օղակը, մնացել է ընդամենը մի քանի կիլոմետր: Հնարավո՞ր է արդյոք ընդամենը մի քանի օրվա ընթացքում գրավել Հայաստանի և Ղարաբաղի միջև ընկած տարածքը (Քելբաջարի շրջանը և Լաչինի շրջանի մի մասը միասին մոտ 3000 քառակուսի կիլոմետր), այն էլ այն դեպքում, երբ ընդամենը երկու օր առաջ Լաչինի միջանցքի ուղղությամբ ադրբեջանական բանակի հարձակմանը մասնակցել է մոտ 30 միավոր զրահատեխնիկա: Եվ ի՞նչ արժե այն հայտարարությունը, թե հայերն ուզում են երկրորդ միջանցքը բացել: Եթե նման անհրաժեշտություն լիներ, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը հեշտությամբ կարող էին երկրորդ ճանապարհը բացել միջանցքից հարավ՝ դեպի Հադրութ: Գուցե Ադրբեջանն ի՞նքն է ուզում, որ հայկական կազմավորումներն առագորեն գրավեն Քելբաջարի շրջանը: Ի՞նչ է բաղկված այս ամենի հետևում:

Արժանահիշատակ Պոլ Գոբլի ծրագիրը ենթադրում էր Քելբաջարի շրջանը կցել Հայաստանին: Գուցե հենց սրանո՞վ պետք է բացատրել, որ ադրբեջանական քարոզչական մեքենան ու դատաստանատար անձինք վաս բաղնված ուրախությամբ շտապում են ի լուր աշխարհի հայտարարել, թե Քելբաջարի շրջանն արդեն գրավված է: Երե դա այդպես է, պետք է ապասել լայնածավալ հարձակման՝ այս անգամ արդեն Զանգեզուրի ուղղությամբ: Սա չի՞ նշանակում Գուլիզադեի այն հայտարարությունը, թե «դատերազմը մտել է հատկապես վտանգավոր փուլ»: Ուստի զարմանալի չէ, որ այդ մասին տեղյակ են դարձվում ԱՄՆ-ը, Իրանը, Թուրքիան և Ռուսաստանը, այսինքն բոլոր այն դեսպանները, որոնք խիստ շահագրգռված են այս խնդրում:

Արդեն սովորական է դարձել, որ Ադրբեջանի նման հայտարարություններին հաջորդում են նոր, լայնածավալ հարձակումներ: Եվ նման դեպքերում, որպես կանոն, մեր հիմնական բշնամին մեր հաղթաթղթերն է լինում: Գուցե հաջողվի գոնե ա՞յս անգամ խուսափել դրանից, մանավանդ որ, ինչպես վկայում են իրադարձությունները ու հատկապես դրանց մեկնաբանությունները, «այս խմորը դեռ շատ ջուր կտանի»:

ԱՐՄԵՆ ԲԱՂՍՍԱՐՅԱՆ

## ԱՌԱՋԱՐԿ

Երևանի ուղեւորատար ավտոտրանսպորտային թիվ 2 ձեռնարկությունն առաջարկում է իր ծառայությունները ելեւեան հաղթի հիմնարկ ձեռնարկություններին եւ մասնավոր անձանց, ձեռնարկությունների աշխատակիցներին տեղափոխելու եւ մասնավոր դասվերներ կատարելու համար:

Կարող ենք տրամադրել ԼԱԶ, ՊԱԶ եւ ՈԱՖ մակնիշի ավտոմեքենաներ: Վճարը կանխիկ կամ փոխանցումով:

Ցանկացողները կարող են դիմել «Երուղեւորտրանս» միավորման թիվ 2 ձեռնարկություն (նախկին հյուրընկալ-ծառայողական), Ք. Երեւան, Ա. Բերդի փող. 10:

☎ 47-38-81, 47-09-12, 47-32-72:

Բարեւ

## Ռուսաստանի օդադեսանտային զորքերը դուրս են գալիս

1993 թ. ապրիլի 1-ից կսկսվի Բաքվում տեղակայված Ռուսաստանի 104-րդ օդադեսանտային դիվիզիայի դուրսբերումը Ադրբեջանից: «Laman» թերթին տված հարցազրույցում դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Վիտալի Շչերբակն ասաց, թե դիվիզիայի դուրսբերումը պետք է ավարտվի մինչեւ ընթացիկ տարվա սեպտեմբերը: Նա հաղորդեց, որ ներկայումս 104-րդ դիվիզիայում ծառայում են 8 հազար զինվորականներ, այդ թվում պարաշյուտիստներ, հրետանավորներ, սակրավորներ եւ կապավորներ: Դիվիզիայի անձնակազմը եւ սպառազինությունը դուրս բերելու համար անհրաժեշտ է 2800 վագոն եւ ծանր տրանսպորտային օդանավերի 500 չվերթ: Դիվիզիան կտեղափոխվի Ռուսաստանի Ուլյանովսկի մարզ: Ինչպես նշեց Վ. Շչերբակը, ամբողջ զենքը եւ տեխնիկան դուրս կբերվի Ադրբեջանից: Դրա հետ մեկտեղ նա նշեց, որ այն զինծառայողներին, ովքեր կցանկանան ծառայել Ադրբեջանի բանակում, կտրվի նման հնարավորություն:

«Ազգ»

## Ամբ-ի հայտարարությունը

Երեկ Բաքվում հրապարակվեց Ադրբեջանի ժողովրդական ճակատի գերագույն մեջլիսի եւ մի շարք քաղաքական կուսակցությունների հայտարարությունը հանրապետությունում ստեղծված հասարակական-քաղաքական իրավիճակի վերաբերյալ: Փաստաթղթի հեղինակներն ափսոսանք են հայտնում, որ Ազգային անկախության կուսակցության քաղխորհուրդն ընդունել է բողոքի զանգվածային քաղաքական միջոցառումներ անցկացնելու մասին որոշումը: Հայտարարության մեջ նշվում է, որ նման մի ջոցառումների անցկացումը կարող է առաջացնել իշխանությունների դաստիարակիչ փոխազդեցությունը եւ հանգեցնել հանրապետության տարբեր ուժերի դիմակայությանը: «Ընդդիմության եւ իշխանությունների միջեւ դիմակայությունը կարող է ծանր հարված հասցնել ժողովրդավարության ընթացքին, սպառնում է Ադրբեջանի դեպակությանը եւ հիմք է ստեղծում բռնության համար», նշվում է հայտարարության մեջ:

Սնարք

## Հունգարական դեղորայք Ադրբեջանին

Հունգարական «Մեդիմոդեմ» դեղագործական ֆիրման Ադրբեջանին կմատակարարի 1.7 մլն ամերիկյան դոլարի դեղորայք: «Դեղորայք եւ բուժտեխնիկա» առեւտրաարտադրական միավորման գլխավոր տնօրեն Ադիլ Մամեդովը հայտնեց, որ ներկայումս Ադրբեջանը դեղապատրաստուկներ է ստանում 1992 թ. դեկտեմբերին ամերիկյան «Սոուսել ինթերնեյշընալ» ընկերության հետ կնքած պայմանագրով: Միաժամանակ թուրքական «Atabay» ֆիրմայի նախագահ Ա. թաբայ Բյուլենը եւ Ադրբեջանի առողջապահության նախարար Ռահիմ Հուսեյնովը պայմանագիր են ստորագրել Բաքվի ներգաղթականաբանական եւ հիմնադեղագործական գործարաններում դեղորայքի համատեղ արտադրության կազմակերպման վերաբերյալ:

Սնարք

## Նենգադուլավոր նախարարներ

Ադրբեջանի ժողովրդական ճակատի ընդհանուր բաժնի պետ եւ գործկոմի նախագահի օգնական Մահմեդ Իմանովը հանրապետության արտաքին տնտեսական կապերի նախարար Ռաուֆ Կարաեւին մեղադրել է այն բանում, որ նրա գերատեսչությունը տնտեսական նենգադուլի գիծ է վարում: Պետության ղեկավար Ա. բուլֆազ Էլչիբեյին առաջարկված է ստեղծել այդ նախարարության գործունեությունը ստուգող հանձնախումբ:

Սնարք

## Հայտարարություն

«Տաուբ» հայրենակցական միությունը կազմակերպում է գործարար տաուբցիների հանդիպում, ապրիլի 10-ին, ժամը 14.00-ին, Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում (Աբովյան փ. 52):

Նախագահություն

Երեւան

## Տնկվեց 21 հազար ծառ

Ձմեռային զանգվածային ծառատնկումից եւ մայրուղաների անտառածածկ վայրերը «սանիթեղուց» հետո այս օրերին Երեւանում սկիզբ են առել եւ ընթանում են ծառատնկման միջոցառումներ, որոնք նոյնպես ունեն «բացակա ծառերի փոխարեն ծառային նոր սերնդի սկիզբ դնել»:

Մարտի 31-ին, Երկաղխորհրդի գործկոմի նախագահ Վահագն Խաչատրյանը եւ գործկոմի ղեկավարությունը նախագահի «գնահատականի» 100-րդ օրը լրանալու կապակցությամբ անցկացրին ծառատնկի իրենց մինի-միջոցառումը: Նրանց ջանքերով ու անմիջական մասնակցությամբ Խանջյան-Գնունի փողոցների անկյունում տնկվեց մոտ 50 ծառ:

Թերեւս քաղաքի ղեկավարության անմիջական մասնակցությունը որոշակի ազդեցություն կարող է ունենալ մայրաքաղաքի կանաչ տարածքները վերականգնելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների վրա: Վատ չէր լինի, եթե մայրաքաղաքի ղեկավարության օրինակին հետեւեին նաեւ հանրապետության ղեկավարները:

Իսկ երեկվա դրությամբ Երեւանում տնկվել է 21 հազար ծառ, ընդորում ծառատունկը նախատեսվող միջոցառումների շարքի մի մասն է միայն:

«Ազգ»

Պետ

## Ստեղծվեց եւս մի ժամանակավոր հանձնաժողով

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ապրիլի 1-ի նիստում ձեւավորեց 1992-93 թթ. խորհրդարանի կողմից բույլատրված վարկային էմիսիայի կատարման ընթացքը եւ բանկերի կողմից վարկային ռեսուրսների օգտագործման ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի կազմը: Ինչպես մեր թղթակցին հաղորդեցին ԳԽ լրատվական ծառայությունից, ժամանակավոր հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին խորհրդարանի մշտական հանձնաժողովների անդամներ եւ խորհրդարանում գործող կուսակցական խմբակցությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Արտաշես Թումանյանը:

«Ազգ»

## Բուժում առանց դեղամիջոցների

Էքստրասենս Ա. Ա. Պետրոսյանը բուժում է կակազող, էնուրեզով (գիշերամիզություն), ոտերիոդիկ (երեւանյան) հիվանդությամբ տառապող երեխաների:

Հասցեն՝ Երեւան, Երկաթգծի կլինիկական հիվանդանոց, 5-րդ հարկ, 518 սենյակ:

Ընդունելությունն ամեն օր (բացի շաբաթ եւ կիրակի օրերից)

ժամը 11:00-13:00

Հեռախոս՝ 45-60-34

**Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը Հայաստանի կառավարությանը մեկ միլիոն դոլար կհատկացնի** գարնանացանի համար սերմացու գնելու նպատակով: Պայմանագիրն ստորագրել են Հայաստանի գյուղատնտեսության նախարարության եւ միջազգային զարգացման գործակալության ներկայացուցիչները: Պայմանագրի համաձայն սերմացուն կգնվի Ռուսաստանում եւ կբաշխվի Հայաստանի ֆերմերներին:

Մամուլի Ընտրանի

## «Զինվորը» վերջապես լույս տեսավ

Վերջապես լույս տեսավ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պաշտոնաթերթ «Զինվոր» շաբաթաթերթի այնքան սպասված անդրանիկ համարը: Սպասված, որովհետև որքան էլ զարմանալի է, բայց իրական պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի բանակն առ այսօր չուներ սեփական պաշտոնաթերթը: Բանակ, որն «առաջնվելու է հանրապետության անվտանգությունը, վճռելու պատերազմի ելքը, կերտելու հայոց հաղթարշավը եւ որոշելու խաղաղության օրը»:

Դատելով առաջին համարից՝ շաբաթաթերթը պատրաստվում է դարբերաբար անդրադառնալ ոչ միայն Հայաստանի զինված ուժերի խնդիրներին, այլեւ աշխարհի հետաքրքիր եւ մոտիկ բեմ կեսերին, տարբեր դեպքերի զինված ուժերին, զինտեսակներին եւ այլն: Յուրաքանչյուրը սիրված կլինի դարբերաբար անդրադառնալ նաեւ բազմաթիվ ցավոտ խնդիրների՝ զինակոչից խուսափողներին, հանրապետությունում տիրող բարոյական անկմանը, զորակոչի մասին օրենքի անկատարությանը, դասալիքներին աջակցող պաշտոնյաների նկատմամբ պատժիչ միջոցների բացակայությանը եւ այլն: Ինչ առած, լավ օրից չէ:

Հուսանք, որ «Զինվոր»-ը ոչ միայն իր արժանի տեղը կգտնի այսօրվա հայկական բազմաղեմ ու բազմաբնույթ մամուլում, այլեւ որոշակի հնարավորություն կտրվի հատկապես այդ բնագավառի վերաբերյալ լրատվական էլիտաբիրի մեջ: Բարի երթ:

Ա. Բ.

digitised by A.R.A.R.@

Զրույց

# ԱՐՄԵՆՊՐԵՍ. ՆՈՐԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

**Շուրջ երկու տասնամյակ առաջ, երբ աշխատում էի այստեղ, թվում էր, թե ոչինչ չի կարող սասանել այնպիսի մի հզոր կառույց, ինչպիսին Արմենպրեսն է: Այս պատերից դուրս էր հորդում կոմունիստական գաղափարախոսության պաթոսով շաղախված այնպիսի լավատեսական մի հեղեղ, որ թվում էր, թե ընդամենը կես քայլ է մնացել մինչեւ «վերջնական հաղթանակը»: Կատարված ու գերակատարված պլանների, աշխատանքային նորանոր սխրանքների, եղբայրական ընտանիքում աննախադեպ ծաղկումների մասին հուշերը սփոփեցին Արմենպրեսի այժմյան տնօրեն ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ հետ այս հարցազրույցը սկսել մի պարզ հարցով. «Ի՞նչ փոփոխություններ կան Ձեր նշանակմանը հաջորդած մեկ եւ կես տարում, ի՞նչ է այսօր Արմենպրեսը»:**

– Նախ, եւ առաջին հերթին այն, ինչ գրված է ցուցանակի վրա՝ պետական, լրատվական գործակալություն: Իմիներդ էլ գիտեք, որ նման անցումը կուսակցականացված, գաղափարականացված խոսափողից նորմալ, աշխատանքային վիճակի հետ չի տրվում: Վերջին երկրների կարեւոր խողությունն եմ համարում այն փաստը, որ Արմենպրեսը հասարակության կողմից սկսել է էլ ավելի ընկալվել որպես առաջնակարգ, խմբագրական, զուտ լրատվական գործակալություն, որի խնդիրը ճշմարտացի, հավաստի լրատվության միջոցով մեր պետականության կայացմանը նպաստելն է:

Իր կոչումով եւ անվանումով պետական մեր գործակալությանը, ցավոք, պետական մոտեցում գրեթե չի ցուցաբերվում: Վերջին տարիների դառը փորձը ցույց է տալիս, որ անգամ բազմաթիվ դժվարություններ ունեցող նորաստեղծ պետության մեջ ամեն ինչ չէ, որ կարելի է հանձնել այսպես կոչված ազգային հարաբերությունների հորձանուտին: Խորհրդային Միության վիրազումից հետո, ինչպես վկայում են այսօրվա իմիջիսական պետությունների մեր գործընկերները, ամենուրեք գտնվել են միջոցներ պետական գործակալությունները պետական հովանավորության տակ առնելու համար: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար ասեմ, որ մեր պետությունն իր վրա է վերցրել աշխատավարձի ինդեքսավորման ծախսերը ու մեկ էլ օրական 10 լիտր բենզին է տվել Հայաստանի բոլոր շրջաններից, Արցախից լուրեր հայթայթող գործակալությանը... Տնտեսվարկային որեւէ հիմնարկ մեր դպրոցներում կարող է գոյատեւել, եթե զբաղված է արտադրությամբ, այլապես նա դատապարտված է...

**– Բայց չէ՞ որ, ի վերջո, լրատվությունն էլ է ապրանք եւ իր արժեքն ունի:**

– Անշուշտ ունի: Իսկ որքան է այդ արժեքը: Ինչպիսին է մեր գնորդների վիճակը: Եւ, արդյոք, միայն լավ վճարողի, շա՞տ վճարողի հետ պետք է համագործակցի պետական, մտածում եմ, պետական լրատվական գործակալությունը: Ես այդպես չեմ կարծում: Պետականության կայացմանը նպաստելու խնդիրը, որի մասին ինչ առաջ խոսցինք, բոլորովին այլ մոտեցումներ է պահանջում: Այսօր իսկ, իմիներս գտնվելով ֆինանսական դժվարին դրության մեջ, անվճար լրատվություն եմ ապահովում հանրապետությունում լույս տեսնող, ամենենին էլ ոչ պաշտոնական մի շարք բերթերի համար: Արմենպրեսի ծառայություններից են օգտվում ափյուռի առանձին պարբերականներ, սեփական մամուլ չունեցող այնպիսի համայնքներ, ինչպիսին է, օրինակ, Գերմանիայի հայ համայնքը:

Շատերն են դիմում մեզ անվճար լրատվություն ստանալու խնդրանքով, սակայն, ցավոք, միայն մեր բարիկամեցողությունը հարցի լուծում չէ: Բազմապատիկ աճել են կապի, էլեկտրաէներգիայի, վառելիքի գները: Նորացման խիստ կարիք են զգում տեխնիկական միջոցները, համեմատաբար ցածր աշխատավարձի պատճառով շարունակվում է աշխատակիցների արտահոսքը... Ինչեւէ: Այդպիսին են ժամանակները: Կարծում եմ, որ մեր բազմաթիվ դիմումները կառավարությանն անհետաքրքիր չեն մնա, իսկ հանրապետության նախագահը հավատարիմ կլինի իր խոսքին, եւ ինչպես միշտ, կաջակցի մեր գործակալությանը:

**– Հանրապետությունում վերջին տարիներին սկսել են գործել անկախ թե կուսակցական լրատվական գործակալությունները, որոնք փորձում են ստեղծել իրենց լրատվական ծառայությունները: Ինչպե՞ս է անդրադառնում այդ մրցակցությունը Արմենպրեսի վրա:**

– Մրցակցությունն, ի վերջո, շահեկան է բոլորի համար: Տասնամյակներ շարունակ պահպանելով լրատվության մենաշնորհը, Արմենպրեսն ամբողջովին գաղափարականացվել եւ կուսակցականացվել էր, հեռացել զուտ լրատվության մասնակարարի իր խնդիրներից: Լրատվական նոր գործակալությունների գործունեությունն անշուշտ երեւույթ է այլակարծության հաստատման, ժողովրդավարության տարածման առումով: Սկսված մրցակցությունը մեզ ստիպում է լինել ավելի ճկուն, դյուրաշարժ, եւ որ ամենակարեւորն է, հավատի: Այս հարցում Արմենպրեսը մտադիր չէ զիջել իր դիրքերը: Պետական լրատվական գործակալությունն իրեն չի կարող թույլ տալ հանուն սենսացիայի թե ինչ շահերի պարզապես աղտոտողմնորոշել, մոլորության մեջ գցել մարդկանց, օգտվել տեղեկատվության չստուգված, պատահական աղբյուրներից: Պատահական չէ, որ նման լուրերը ստուգելու, կամ հավատի լրատվություն ստանալու համար արտասահմանյան զանգվածային լրատվության շատ միջոցներ դիմում են Արմենպրեսին:

Անհամեմատ մեծ է նաեւ ստացված լրատվության ծավալը: Իսկ դա նշանակում է ընտրության ավելի լայն հնարավորություն:

Այսօր Արմենպրեսը պայմանագրային, միջպետական հարաբերությունների, զուտ փոխանակման միջոցով համագործակցում է արտասահմանյան եւ նախկին խորհրդային հանրապետությունների բազմաթիվ լրատվական գործակալությունների հետ: Մենք լրատվություն ենք ուղարկում Արգենտինա, ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Գերմանիա, Բուլղարիա, Սիրիա, Հորդանան, Եգիպտոս, Անգլիա, Բալթյան երկրներ, Մոլդովա, Վրաստան, Ռուսաստան, Ուկրաինա...

**– Այդ ամենն, ինչ խոսք, տպավորիչ է: Իսկ պատմեցիք, թե Արմենպրեսն ինչպես է աշխատել ձմռանը, մութ եւ ցուրտ աշխատասենյակներում մարդիկ պատճենող թղթերի օգնությամբ ձեռագիր հաղորդագրություններ ու լուրեր են բազմացրել ու տարածել, իսկ երբ 1–2 ժամ հոսանք են տվել, հեռատիպավարուհիները բդյա ձեռնոցներով են աշխատել... Աշխատանքը չի դադարել ոչ մի օր: Արդյո՞ք չե՞ն հոգնել հերոսական ջանքերով անցեղի դժվարություններ հաղթահարելուց: Չէ՞ որ կարելի էր գոնե միակ պետական գործակալությանը առպահովել էլեկտրաէներգիայով:**

– Բանն էլ հենց այն է, որ ձեր նշածից ավելի հետաքրքիր անլուծելի են դառնում պատասխանատու մեծ թե փոքր պաշտոնյաների առանձնասենյակներում: Անգործությունը, նախաձեռնությունից ու պատասխանատվությունից խուսափելը նրանց կարծիքով երկարակեցության լավագույն երաշխիքն են: Օրինակ, շուրջ երկու շաբաթ գործակալությունը զրկված էր հեռատիպային կապից: Վերջապես պարզվեց, որ կաբելը վնասվել է ինչ-որ անօրինական շինարարության հետեւանքով: Որքան անհեղի ջանքեր խլեց այդ հարցի լուծումը: Ով պետք է հաստոցի հսկայական վնասը: Այսօր էլ մի նոր խնդիր է ծագել. գործակալությանը էլեկտրաէներգիա է տրվում 2–3 ժամով...

**– Ինչ նոր փոփոխություններ կան գործակալությունում, ինչպիսին եք տեսնում նրա ապագան:**

– Վերջին տարվա ընթացքում կատարվել են կառուցվածքային մի շարք փոփոխություններ. լուծարվել են մասնագիտական մի քանի բաժիններ, հստակեցվել են լրագրողների աշխատանքային ոլորտները: Կազմավորվել է միջազգային կապի եւ լրատվության բաժինը: Փորձում ենք ստեղծել մի նոր ծառայություն, որը կզբաղվի վերլուծությամբ, քաղաքական կանխատեսումներով եւ սոցիոլոգիական հետազոտություններով: Ցանկանում ենք նաեւ մեր ֆոտոինֆորմացիայի շրջանակներում ստեղծել տեսալրատվական ծառայություն:

Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, ապա, իմ կարծիքով, կատարելով պետականության կայացմանը նպաստելու իր խնդիրը, Արմենպրեսը որոշ ժամանակ անց կվերածվի ազգային լրատվական գործակալության:

Զրույցը վարեց
ԳԱՐԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԸ

Զրույց

## Մաչչելի էկոնոմիկա

Երբ ասում են շուկան ինքնանպատակ չէ, ապա պիտի պատկերացնել մի տնտեսական մոդել, որը կողմնորոշված է դեպի մարդու պահանջմունքների բավարարումը, ինչպես արտադրողի ու վաճառողի, այնպես էլ սպառող կոչեցյալի, հանգի այս խավերի միջեւ իրականում տարբերություն գոյություն չունի: Այսպիսի էկոնոմիկայի մեջ պիտի լինի որոշակի կառույց՝ արդյունավետ աշխատող պետսեկտորով: Վերջինիս եւ մասնավորի միջեւ մրցակցությունն է ունակ տալու ակնկալվելիք դրական արդյունքները՝ հանակ, որակ, ապա դարձյալ հանակ, գնի անկում, տեխնոլոգիայի կատարելագործում, ինքնարժեքի նվազեցում, դարձյալ գնի անկում... եւ այսպես դեպի բարեկեցություն: Սակայն մինչ այդ պետսեկտորը պետք է դառնա մրցունակ, իր մեջ ներառնի մասնավորին բնորոշ տարերից ասենք այնպիսիք, ինչպիսիք են ծկունությունը, պահանջարկին արագ հարմարվելու ունակությունը, ժամանակի, իրականության զգացողությունը չկորցնելը եւ այլն:

Արտերկրյա կապիտալի ներհոսքը ռուբլու իջեցված կուրսի պայմաններում հետեւությամբ վերածում է օտարերկրացիների կողմից անհեթեթ ցածր գներով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացին: Սակայն նույնիսկ այս դեպքում արտասահմանյան ֆիրմաները խուսափում են իրենց կապիտալը ներդնել մի տեղ, ուր քաղաքական անկայունություն է տիրում, անիշխանություն, կաշառակերություն, ուր կարվածահար վիճակում է արդյունաբերությունը:

Չվերահսկվող արտահանումը եւ մասնավոր միջնորդության ազատությունը հանգեցրին «անկախ» պետություններից կապիտալի ազատ արտահոսքին: Ընդամենը մեկ տարվա՝ 1991 թվականի ընթացքում Միջազգային ֆինանսական ինստիտուտի (Վաշինգտոն) փորձագետների գնահատմամբ, մասնավոր անձանց եւ կոմերցիոն կառուցվածքների կողմից ԱՊՀ-ից արտերկիր է արտահանվել ավելի քան 20 միլիարդ դոլար:

Զարգացած շուկայական տնտեսություններում կորպորացիաների բաժնետոմսերը (արժեթղթերը) պատկանում են ոչ այնքան անհաս տերերին, որքան արժեթղթերն իրենց ձեռքում պահող ֆիրմաներին՝ հոլդինգներին ու ոչ մասնավոր սեփականություն են հանդիսանում, ոչ էլ՝ պետական: Դրանք ղեկավարվում են որոշակի կանոններով ընտրված կոմիտեների կողմից: Այդ սկզբունքով են գործում Կարնեգիի, Նոբելի եւ Պուլիցերի ֆոնդերը: Ճիշտ նույն կերպ, ինչպես որ ֆեոդալիզմի ընթերում հաստատվում էին բուրժուական ինստիտուտները, այդ կերպ էլ ժամանակակից կապիտալիզմը ստեղծել է սոցիալիստական էկոնոմիկայի հիմնական ինստիտուտը՝ հասարակական ֆոնդերը, այսինքն արտադրական, առեւտրական, բանկային կորպորացիաների բաժնետոմսերը տնօրինող ֆիրմաներ, որոնց ղեկավարումն իրականացնում են ընտրված մարդիկ եւ որոնք արժեթղթերից ստացվող շահաբաժինն ուղղում են դեպի սոցիալապես օգտակար նպատակներն ու նոր բաժնետոմսերի ձեռքբերումը:

Հասկանալի է, որ այս դեպքում ամենեւին չի ոչնչացվում շուկան, կամ կապիտալը, մասնավոր սեփականությունը: Սեփականաշնորհում իրականացնելիս չէր խանգարի այդի առաջ ունենալ այս փորձը:

Միայն բավարար ուժեղ պետական կարգավորման պայմաններում է հնարավոր անցումը շուկային, գտնում են որոշ տնտեսագետներ: Այս անցման կարեւորագույն մասը պիտի դառնան շուկայական ենթակառուցվածքի ձեւավորման, փոքր եւ միջին մասնավոր ձեռնարկատիրության համար պայմանների ստեղծման պետական ծրագրերը, բնությունների վարձակալման եւ սարքավորումների լիզինգի համակարգը, հումքի մաչչելի շուկան, հարկային գեղջերը, էժան վարկը եւ այլն: Սակերեսային, անդարասխանատու մոտեցումն այս հիմնահարցերին պայմաններ է ստեղծում ամբողջատիրության վերադարձի համար: Իսկ ինչպիսի՞ն է այս առնչությամբ իրադրությունը մեզանում:

Բաժինը վարում է
ՄԱՐԳԱՐ ՄԵՆԵՋՅԱՆԸ

Գրություն

# Ստեղծվեց հայ-գերմանական ընկերություն

Երեկ Երեւանի Կամերային եռաժեստության տանը տեղի ունեցավ հայ-գերմանական ընկերության հիմնադիր կոնֆերանսը, որին մասնակցում էին Հայաստանի մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը, Հայաստանում գերմանական դեսպանության ղեկավար Նորբերտ Հայնցեն եւ այլ պատասխանատուներ: Ինչպես տեղեկացանք պրն. Մովսեսից, ընկերությունն անշուշտ ունենալու է մշակութային ուղղվածություն, բայց իր մեջ կարող է ներառել եւ գիտական, եւ կրթական, եւ նույնիսկ այլ բնագավառներ: Նախարարը տեղեկացրեց նաեւ, թե ընկերությունը կհամակարգի մինչեւ այժմ համալսարանում, Բրյուսովի անվան ինստիտուտում եւ այլուր ստեղծված կազմակերպությունների աշխատանքը, կնվանավորի նրանց ծրագրերը, եւ որ ամենակարեւորն է, հնարավորություն կտա ապահովել գերմանական իշխանությունների հետ հետագա շփումների պետական մակարդակը: Ծրագրերը հետագայում կարող են ընդլայնվել ընդհուպ մինչեւ այն աստիճան, որ ինչպես հիմնադիր անդամներ, այնպես էլ գերմանական կողմը կարող են ֆինանսավորել ընկերության ծրագրերը: Ընկերության հիմնադիր անդամներն են Հայաստանի մշակույթի, լուսավորության, բարձրագույն կրթության եւ գիտության նախարարությունները, «Շեմ» մշակութային եւ տեսաերգիկ ընկերությունները, Գյոթեի ինստիտուտի ուսումնական միջոցների հայկական կենտրոնը, Հայաստանի գերմանական համալսարանը, Հայաստանի ազգային ֆիլմարարանը, Բրյուսովի անվան ինստիտուտի եւ համալսարանի գերմաներեն լեզվի ամբիոնները:

Պրն. Հայնցեն նույնպես իր ուրախությունը հայտնեց Հայաստանում նման ընկերության ստեղծման առթիվ, ավելացնելով, թե դրանով իսկ Հայաստանի եւ Գերմանիայի հարաբերությունները նաեւ մշակութային ուղղվածություն կստանան: Նա հայտարարեց նաեւ, թե ընկերության ստեղծման մեջ տեսնում է հետագայում Հայաստանում Գյոթեի ինստիտուտ բացելու հիմքերը:

«Ազգ»

Հոդվածներ

# Հոգեհարազատ ժողովուրդների համաժողով

Ռուսաստանի ԳԽ սահմանադրական հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Օլեգ Ռոմանցեւը հայտնեց, որ Հարավսլավիա կատարած իր վերջին ուղեւորության ժամանակ ոչ պաշտոնական մակարդակով անցկացնել Ռուսաստանի, Հայաստանի, Հունաստանի, Կիպրոսի եւ Հարավսլավիայի քաղաքագետների աշխատանքային հանդիպում, որը կնախորդեր հոգեղեն իրար մոտիկ ժողովուրդների համաժողովը: Մարտի 31-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նա նշեց, որ համաժողովն անցկացվում է այդ երկրների տնտեսական եւ քաղաքական համագործակցության հարցերը համաձայնեցնելու համար, ինչի որ էլ ավելի նպաստում է դառնում «իսլամական պետությունների կազմակերպության գործունեությունը»: Ռոմանցեւի կարծիքով, համաժողովը կնպաստեր Ռուսաստանի դաշնակցային կապերի կառուցմանը, «որոնք նա այսօր ամբողջությամբ կորցրել է»:

ԻՖ


## «Արամ Խաչատրյան» ֆիլհարմոնիկ սրահ

*Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ*
*68-րդ համերգաշրջան*

**4485-4486 հայոց թվական**

Համերգաշրջանի հովանավորն է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը

**4 ապրիլի**

Դիրիժոր Շտրաուս
*Սիմֆոնիկ պոեմ «Թիլ Օյլենշպիգել»*

Էդվարդ Գրիգ
*Կոնցերտ դաշնամուրի եւ նվագախմբի համար*

Պյոտր Չայկովսկի
*Սիմֆոնիա թիվ 5*

Մենակատար
ԱՆԴՐԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ (Արեւմ)

Դիրիժոր
ՋՈՐՋ ՓԵՇԼԻՎԱՆՅԱՆ (ԱՄՆ)

Գեղ. ղեկավար եւ գլխ. դիրիժոր
ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Սկիզբը՝ ժամը 14.00

Տոմսերը վաճառվում են «Արամ Խաչատրյան» համերգասրահի տոմսարկղում:


digitised by A.R.A.R.@

Մտորումներ

# ՆՈՐԻՑ ՆՈՒՅՆԻ ՄԱՍԻՆ

## *Խորհրդարանում քննարկվող ՀՀ 1993 թ. սոցիալ-տնտեսական ծրագրի կապակցությամբ*

### Նախաբանի փոխարեն

Ստորեւ շարադրվածը ՀՀ բարձրագույն գործադիր իշխանությունների վարած տնտեսական քաղաքականության վերլուծության վերջին մի քանի ամսում արված մեր չորրորդ փորձն է: Այնպես որ, ենթարկվում ենք նաեւ ծանծրալի լինելու վտանգին: Իհարկե, առանց որեւէ մեկնաբանության էլ ամեն ինչ պարզ է: Պարզ է այն, ինչ կա: Բայց շատ հաճախ պարզ եւ այնքան էլ ակնհայտ չէ, թե ինչպես է, որ այսպես է: Այս վերջին հարցադրման պատասխանի ընտրության օժանդակմանն է ուղղված մեր հերթական վերլուծությունը:

### «Ծրագիրը»

Տնտեսական ծրագրերի անփոփոխ հեղինակների նոր «ծրագրի» գնահատումն անհրաժեշտաբար պահանջում է նրա բուն էությունը զուգակցել նախորդ «ծրագրի» հետ համեմատական վերլուծությամբ:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս «ծրագրի» հիմնական նպատակն է հոչակվում «բնակչության սղառման մակարդակի կայունացումը եւ հետագա աճի նախադրյալների ստեղծումը» (էջ 3):

«Այդ նպատակին հասնելու համար «ծրագրով» նախատեսվում է» համախառն ազգային արդյունքի աճ 22,2 տոկոս, արդյունաբերության արտադրանքի աճ 33,4 տոկոս, գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճ 6,4 տոկոս: Ըստ նախորդ «ծրագրի», համապատասխանաբար 23,9 տոկոս, 40,9 տոկոս եւ 7,1 տոկոս, այսինքն՝ աճ ավելի բարձր չափերով:

Ստացվում է այնպես, որ վարկային մեծածավալ էմիսիան բացասաբար է անդրադառնալու ազգային տնտեսության զարգացման վրա: Այն, ինչ նախատեսվում էր ապահովել առանց ծավալուն ֆինանսական ներարկման, անհնարի՞ն է դառնում դրա առկայությամբ. պարտադրված հարցադրում: Կամ նախորդ «ծրագրի» ցուցանիշներն իրական չէին, ավելի ստույգ՝ կեղծ էին եւ գիտակցված ձեւով ուռճացված, կամ էլ նոր «ծրագրով» նախատեսվում է ռեսուրսների պակաս արդյունավետ օգտագործում: Երկու մոտեցումներն էլ մեզ համար մերժելի են: Երկու դեպքում էլ հարցադրումն ուղղվում է միեւնույն անձանց՝ ծրագրի հեղինակներին, որոնց վերջին հայտարարություններից դժվար է կռահել, թե որն է նրանց նոր դիրքորոշման շարժառիթը: բացահայտ անհաջողություններ նախորդ պատկերացումների եւ մոտեցումների իրագործման մե՞ջ, թե դավանած սկզբունքների փոփոխությունը:

Նախորդ «ծրագրի» կադակցությամբ արված մեր սկզբունքային հարցադրումները եւ պահանջները մնում են ուժի մեջ: Երեւում է նաեւ, որ դրանք հաշվի են առնվել բնարկվող «ծրագրի» հեղինակների կողմից որոշ յուրօրինակ մերձոդական ցուցումներ, բայց ոչ թե առաջադրված խնդիրները լուծելու, այլ շրջանցելու, հարթելու կամ լռության մատնելու համար: Նոր «ծրագրում» որոշ կանոն բացակայում են բոլոր այն կանխատեսումները եւ մեկնաբանությունները, որոնց ԳԽ-ում նախորդի քննարկման ժամանակ ընկել էր քննադատությունների ամենամեծ բաժինը:

Ուշագրավ է նաեւ, որ այս «ծրագրի» որակն այլեւս չի փաստարկվում «ամերիկյան փորձագետների» կարծիքով: Ամենայն հավանականությամբ «համապատասխան» փորձագետների փնտրտուքը չի դադարել, եւ այս անգամ արդեն շարունակվում է ԱՄՆ-ի արեւելյան ափերին...

«Ծրագրում» առաջ քաշված նպատակային խնդիրները հիմնականում ընդունելի են եւ անհրաժեշտ: Մնում էր ընդամենը զարգացման նախապայմանների սրտի եւ անսխալ վերլուծության հիման վրա կա[illegible] նպատակին հասնելու միջոցների մշակման ընտրությունը: Հիշեցնենք, որ նոր նախորդ «ծրագրի» [illegible]ության սղառման մակարդակ[illegible]հայտվում էր որոշ մարդ[illegible] ֆիզիկական վերարտադրության եւ սահմանային մեծություն: Նոր «ծրագրով» այն համարվում է բավարար, քանի որ բնակչության «իրական եկամուտների անկումը» շարունակվելու է ողջ տարվա ընթացքում եւ կայունանալու է միայն տարեվերջին (էջ 9): Ըստ «ծրագրի», «սպառողական արդյունքների եւ ծառայությունների գների ամփոփ ինդեքսը» (ճշգրիտ՝ սպառողական գների ինդեքսը) 1993 թ. կկազմի 925 տոկոս (էջ 14), իսկ բնակչության դրամական եկամուտները կաճեն 8,1 անգամ: Հիշեցնենք, որ հայտարարված նպատակի եւ սպասվելիք արդյունքների նույն անհամապատասխանությունը բնորոշ էր նաեւ նախորդ «ծրագրին»:

Դրականորեն հասկեցվել է զարգացման նախադայմանների դասակարգումը, բայց անընդունելի ձեւով «արտաքին դայմաններում» են ներառվել «տնտեսության առկա կառուցվածքի հիմնարար փոփոխությունների անհնարինությունը կարճ ժամկետում» կամ «սեփական դրամական համակարգի բացակայությունը...» (էջ 8): Միաժամանակ առկա է ձեւակերպումների բերի դասկերացումների փասը: Ինչ է նշանակում «նկատելի դարձնել առաջարկի ու դահանջարկի ազդեցությունը տնտեսական հարաբերությունների ծավալման վրա (էջ 10): Երեւի գեղեցի՞կ է հնչում, բողնենք բնարագետներին, բայց սա մասնագիտական անգրագիտություն է: Նույն ձեւով ֆիզիկոսը դետք է հայտարարեր՝ նկատելի դարձնել ծանրության ուժի ազդեցությունը ձգողականության ծավալման վրա:

Տարակուսանք է առաջացնում նաեւ սպառողական ապրանքների տուկայի «ծրագրային» մեկնաբանությունը: Համաձայն կառավարության, 1992 թ. բնորոշ է եղել սպառողական տուկայի հագեցվածության խիստ անբավարար մակարդակը: Ազատականացված, իսկ իրականում սանձազերծված գների դայմաններում նման երեւույթ գոյություն չի կարող ունենալ: Խիստ անբավարար հագեցվածության դեֆիցիտի ցուցանիշը հերթերն են, իսկ հացի հերթերից զատ, 1992 թ.-ՀՀ-ում այլ հերթագոյացումներ չեն դիտարկվել: Նման մեկնաբանությունը եւս միտում է սպառման ցածր մակարդակի դատճառը եկամուտների բաշխման դետական արատավոր քաղաքականությունից փոխանցել եւ տարադրել հասատված տնտեսական բառում:

1993 թ. տնտեսական քաղաքականության հիմքն է հայտարարվում անցումը տուկայական հարաբերություններին (էջ 23), իսկ «ծրագրային» նախագծումներով իրականում 180 աստիճանով շրջադարձ է կատարվում դեպի տնտեսության կառավարման դետական հրամայական մոդելը: Սա «ծրագրի» էությունն է: Հնարավոր է, որ դրա անհրաժեշտությունը եւ ծավալները վիճարկման առարկա են, բայց իրենք դետք է իրենց անուններով կոչել:

Վերհիշենք, որ նախորդ «ծրագրով» տնտեսական քաղաքականության նպատակն էր «հանրապետության տնտեսության մակրոտնտեսական կայունացումը...» (էջ 21): Այսինքն, նվազագույն դետական միջամտություն տնտեսական միավորների գործունեությանը:

Դետական ձեռնարկությունների սեփականության ատրյեկտի տնտեսական կարգավիճակի ապահովման փոխարեն, որը նրանց թույլ կտար սահուն բաժանցել ձեւավորվող տուկայական հարաբերությունների դորտը, նոր «ծրագրով» կառավարությունն ըստ էության փորձելու է ստանձնել տիրակալի նախկին դերը:

Վարկային էմիսիայի շնորհիվ տնօրինված հսկայական միջոցներով բնակչության սոցիալական դաշտդանվածությունն ապահովելու եւ տուկայական համակարգի հասատումը խթանելու փոխարեն ընտրվում է սոցիալական լարվածությունը մեղմելու եւ իշխանությունը դահդանելու քաղաքականությունը:

Անհրաժեշտ ենք համարում հետեւյալ դարգաբանումը: Երբ դասավորենք բոլոր ապրանքները ըստ նրանց գների, կտանանք դրանց հասարակական կարեւորության սանդղակը: Նույնը կատացվի, եթե գների փոխարեն վերցնենք դրանց վճարման համար ծախսված մեր եկամուտների հարաբերական մեծությունները: Այսինքն, թե տվյալ ապրանքի կամ ծառայության վրա մեր եկամտի որ մասն է ծախսվում: Օրինակ, եթե մեր համամաղաքացիները Ա ապրանքի ձեռքբերման համար ծախսում են իրենց անձնական եկամտի 5 տոկոսը, իսկ Բ-ի վրա՝ 6 տոկոսը, պարզ ակնհայտ է, որ հասարակության համար երկրորդն ավելի մեծ կարեւորություն ունի: Այժմ տեսնենք, թե կառավարությունն ինչպես է կատարում այդ գնահատումը: Անցած 1992 թ. մեծահոգաբար համարենք բարենդատաս եւ համեմատենք 1993 թ. «դլանային» տարվա հետ: 1992 թ. կառավարությունն իր տնօրինած միջոցները, այսինքն դետական բյուջեն ծախսել է հետեւյալ հիմնական ուղղություններով եւ չափերով. տնտեսության ֆինանսավորում՝ 31,0 տոկոսը, սոցիալ-մշակութային միջոցառումներ՝ 35,9 տոկոսը, գիտություն՝ 2,5 տոկոսը: 1993 թ. համար դլանավորված է համապատասխանաբար 15,0, 34,2 եւ 1,7 տոկոս: Վերածենք թվերի լեզուն, հետեւությունները բաղնելով ընթերցողին: Ժողովրդական տնտեսությունը կառավարության տեսանկյունից կորցրել է իր կարեւորությունը կրկնակի անգամ (31,0-ից 15,0 տոկոս), նրա բախտակիցն է դարձել նաեւ գիտությունը (2,5 տոկոսից 1,7 տոկոս), որոշ չափով «նվազել» է նաեւ լուսավորության, առողջապահության, մշակույթի եւ այլնի կարեւորությունը: Բնականաբար, հարց է ծագում, իսկ չկա՞ն արդյոք բնագավառներ, որոնց հասարակական արժեքը կառավարության ըմբռնմամբ աճել է: Իհարկե, կան: Դա կառավարությունն է, որի բարգավաճման համար նախատեսված միջոցները (8 մլրդ ռուբլուց ավելի) գերազանցում են գիտության դետական ֆինանսավորումը 1,8 անգամ:

Այսպիսով, 1993 թ. դլանային բյուջեի ծախսերի վերլուծությունը եւ համեմատությունը 1992 թ. կատարողականի հետ եւս փաստարկում է, որ ծրագիրը կոչված է կայունացնելու ոչ թե տնտեսությունը, այլ կառավարող խմբակցությանը, եւ որի կատարումը բնակչության վրա կնսի եւս մի այսպիսի ձմեռ, գումարած 100 միլիոն դոլլարի դարտային բեռ: Հանրապետության առաջ ծառացած կենսական խնդիրները «ծրագրով» ոչ թե լուծվում, այլ ասոեցվում են, իսկ մեկ տարի հետո երեւի նատերդինյան կամ... կամ... դատմություն:

### Վերջաբան

Հայտնի է, որ վարկային էմիսիայի մասին ՀՀ ԳԽ որոշմամբ ըստ էության գործի է դրված այս ծրագիրը, անկախ այն բանից, կհաստատվի, թե ոչ ԳԽ կողմից: Ելնելով այստեղ նրա կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողության սահմանումն է, որը կարելի կլինի իրագործել միայն խորհրդարանի բարեփոխումներից հետո: Իսկ ի՞նչ է մնում մեզ, հդատակներիս: Մեզ մնում է եւս մեկ անգամ համոզվել, որ բախտը դաշնակից է, որի վրա դետք չէ հույս դնել... եւ որքան շուտ, այնքան լավ:

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
«2-Ա» վերլուծական կենտրոն

Գործարար

## Հացահատիկի համաշխարհային առեւտրի կանխատեսումներ

Աշխարհում հայտնի «Քարգիլ» առեւտրական ֆիրմայի գնահատման համաձայն, հացահատիկի համաշխարհային առեւտրի ծավալը կարող է 1993 թ. 197 միլիոն տոննայից 2000 թ. հասնել մինչեւ 225 միլիոնի: Հացաբույսերի բերքատվությունը Արգենտինայում, Ավստրալիայում եւ ԱՄՆ-ում կայուն կերդով բարձր կլինի ագրոտեխնիկական արդյունավետ միջոցների օգտագործման շնորհիվ: Ընդհանուր շուկայի երկրներում 1993 թ. 168,4 միլիոն տոննա կազմած հացաբույսերի բերքը առաջիկա տասնամյակներում չի գերազանցի 180 միլիոն տոննայից:

Ինչպես գտնում է «Քարգիլ»-ը, բնաբկվող ժամանակամիջոցում Չինաստանի եւ Հնդկաստանի հացահատիկի դահանջմունքը կգերազանցի այդ երկրների բերքը:

Անդրադառնալով առեւտրի եւ սակագների գլխավոր համաձայնագրի շրջանակներում վարվող առեւտրական բանակցություններին, հիշյալ ֆիրման ընդգծում է, որ եթե դրանք հաջողությամբ չամփարտվեն, արդա անխուսափելի կլինի առեւտրական դատերազմն իր բոլոր անդրադառնալիքներով: Այդ դեդքում եվրոդական միավորումն ամրոցներ կկառուցի գյուղատնտեսական ապրանքների ճանապարհին, կկրճատի սննդի բաղադրիչների ներմուծումը եւ կշրջափակի արեւելաեվրոդական երկրներից կատարվող մատակարարումները:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

## Որոշել են կասեցնել գների անկումը

Նավթ արտահանող երկրների կազմակերդությունում որոշում է ընդունվել նավթի համաշխարհային շուկայում զսպել գների անկումը նավթային կարտելի անդամ երկրների քվոտաների նվազեցման միջոցով. Ռոյթըր գործակալությանը հեռախոսով տված հարցազրույցում հայտարարեց Քուվեյթի նավթի նախարար Ալի Ահմեդ ալ Բաղլին: «Գուցե կազմակերդությունն այսօր մեծ ազդեցություն չի գործում աշխարհում նավթի գների գոյացման վրա, սակայն ապագայում նա ի վիճակի կլինի վերահսկելու այդ ընթացքը», ընդգծեց Ալի ալ Բաղլին: Նրա խոսքերով, քվոտաների համաձայնեցման համար ապրիլի 12-ին նախատեսվում է Մասկատում հրավիրել կազմակերդության նավթի շուկայի վիճակի վերահսկման կոմիտեի նիստ:

Սակայն, նշում է գործակալությունը, չնայած նավթ արտադրող երկրների ղեկավարների բազմիցս արած այն հայտարարություններին, թե իրենք մեկ տակառ նավթի գինը կհասցնեն 21 դոլլարի, իրականում անցյալ շաբաթ գինը կազմում էր 17, 84 դոլլար, թեեւ նավթ արտահանող երկրների կազմակերդությունը փետրվարյան նիստում որոշել էր նավթահանույթը օրական 25,55 միլիոնից իջեցնել 23,58 միլիոն տակառի:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Մտորում

Այսօր աշխարհում ծավալված քաղաքական դայքարն ունի շատ ավելի խորը հիմքեր: Առաջին հայացքից կարող է թվալ, թե մենք գտնվում ենք աբսուրդի բատրնում, եւ գործողությունները զուրկ են տրամաբանությունից: Բայց եթե փորձենք վերհանել այն, ինչ թաքնված է քաղաքական քայլերի ետեւում, արդա իրադրությունը կդառնա հասկանալի: Խոսքը այն բանի մասին է, որ ըստ էության XX դ. վերջը բնութագրվում է երկու աշխարհայացքների, ավելի լայն՝ երկու մշակույթների բախմամբ, որոնցից առաջինը բնութագրվում է անհատի դերի վերագնահատմամբ, ռացիոնալիզմով, գործարարությամբ եւ այլն, երկրորդը՝ համայնավարական մոտեցումներով, մտահայեցողությամբ եւ այլն: Այդ մոտեցումների կրողներն են ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը: Ընդ որում, այդ երկու գերտերությունները փորձում են դարասկզբից ի վեր իրենց արդելածը տարածել ողջ աշխարհի վրա: Եթե Ռուսաստանը վերջ ի վերջո զիջի, հրաժարվի կառավարման համայնավարական սկզբունքներից եւ ընդունի արեւմտյան մոդելը, ըստ երեւույթին հակառությունը կստանա ժողովրդավարություն-արմատական կանություն տեսք: Այսինքն, ԱՄՆ-Թուրքիա կառը կդահանջվի եւ ուղղված կլինի տարածքի իսլամական տերությունների դեմ:

Իրավիճակի ավելի հանգամանալից վերլուծության համար նախ եւ առաջ դահանջվում է հստակեցնել դատկերացումները երկու վերը նշված արդելածների մասին, որոնք, ինչպես տեսվեց, հակամարտության հիմքում են ընկած:

Ժողովրդավարության հիմնական սկզբունքները տարածում են գտնում ողջ աշխարհում: Հիշենք, որ եթե ի սկզբանե հայտնի էր Արեւելքին դեմոկրատական քաղաքդետությունը, արդա այսօր աշխարհում հարյուրից ավելի ժողովրդավարական դետություններ կան:

Շատ դարզեցված ձեւով ժողովրդավարությունն ուժերների իշխանությունն է բույլերի նկատմամբ, ուժերներ, որոնք անցել են բնական ընտրության ճանապարհը դեպի գիտություն, արվեստի եւ գործունեության այլ բնագավառների գագաթները: Կարճ ասած, ժողովրդավարությունն այն արդելածեւն է, որի դեդքում ստեղծվում են բոլոր սոցիալական, տնտեսական եւ այլ դայմանները ուղեղների եւ կարողությունների մրցավազքային դայքարի համար: Բայց, այնուհանդերձ, բույլերը չեն կոտրվում ցրից, սովից եւ այլն, քանզի նրանց համար արդելու եւ աշխատելու համեմատաբար բարենդատաս դայմաններ գոյություն ունեն: եւ բույլերը վստահում են ուժեղներին կառավարման եւ ճանաչողության բոլոր խնդիրները: Այսինքն, առկա է ոչ թե արյան, այլ խելքի ազնվականություն: Բացի այդ, ժողովրդավարության օրոք արդահովվում է փոքրամասնությունների իրավունքների դաշտդանությունը, գոյություն ունեն մշակված սոցիալական եւ այլ մեխանիզմներ:

Իհարկե, այս արդելածը զերծ չէ թերություններից: Երկու հիմնական թերությունների մասին բազմիցս խոսվել է: Դա նախ շահույթի գերադասությունն է հասարակական գործունեության բոլոր ոլորտներում, այսինքն, փողի մասնակի ֆետիշացումը, եւ երկրորդ, զանգվածային մշակույթը, որը փաստորեն առաջինի հետեւանքն է: Սա այն ամիլլեսյան գարշադարն է, որը բուլացնում է նշված արդելածեւի վրա հիմնված հասարակությունը, շատ դարագաներում շեղելով նրան մարդկության գոյատեւման հիմնական նդատակից՝ ճանաչողությունից, լինի դա ասված թե բնություն: Ընդ որում, դետք է նշել, որ ժողովրդավարության եվրոդական մոդելը շատ ավելի մեղմ է, քան ամերիկյանը, հակասություններն ավելի հողարկված, եւ ըստ երեւույթին, դա է դատճառներից մեկը, որ այսօրվա քաղաքական դայքարում եվրոդան ավելի զուսդ է եւ շատ դարագաներում դիտորդի դերի է գրավում:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, այստեղ դեռ ուժեղ է Արեւելքին հատուկ համայնավարական մոտեցումը թե սոցիալական ու տնտեսական, թե քաղաքական կյանքում, ի տարբերություն Արեւմուտքի, ուր հասարակության հիմքը ոչ թե համայնքն է, այլ անհատը: Սկսած Պետրոս Առաջինից, շատ ռուս քաղաքական գործիչներ են փորձել «դատուհան բացել» դեպի արեւմտյան արդելածեւ, բայց դա նրանց չի հաջողվել: Փաստորեն սա է դատճառը, որ մարքսիզմը լենինիզմով համեմված

digitised by A.R.A.R.@

Տնտեսություն

# ՀԱՐԿԵՐ. ԻՆՉՆ ԻՆՉՊԵՍ Է ԱՐՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես վկայում են ոլորտային աղբյուրները, ՀՀ ոլեսական բյուջեի եկամուտները 1992 թ. կազմել են 83 տոկոսով: Անշուշտ, սա հնչում է որպես հաջողություն արտադրության ֆիզիկական ծավալների կիսով չափ անկման պայմաններում: Սակայն հաշվի առնելով, որ արժեզրկման տեմպերը 1992 թ. շատ ավելի բարձր էին կանխատեսվածից (հատկապես երկրորդ կիսամյակում), առաջ է գալիս, որ պետական բյուջեն իրականում կատարվել է ընդամենը 35-40 տոկոսով: Այս թվերը, կարծում ենք, բոլորովին լավատեսություն չեն ներշնչում: Սակայն կարևորն այն է, որ Գեր-ում 1993 թ. պետական բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ ոչ ֆինանսների նախարարի, ոչ էլ ոլորտային մյուս անձանց կողմից չտրվեցին բյուջետային առկա ճգնաժամի իրական, խորը վերլուծություններ, սահմանափակվելով միայն «օբյեկտիվ հանգամանքներով»:

Օրինակ, ինչո՞վ բացատրել, որ բյուջետային մուտքերի թերակատարումների մոտ 90 տոկոսը բաժին է ընկնում ավելացված արժեքի հարկին, եւ որ արտադրության անկման, պահեստներում պատրաստի արտադրանքի կուտակման, Ռուսաստանի եւ ԱՊՀ մյուս երկրների հետ վճարային հարաբերությունների կարգավիճակի նույն պայմաններում ավելացված հարկի եւ շահութահարկի մուտքերի կատարման աստիճանը բոլորովին տարբեր է (շահութահարկի մուտքերը կատարվել են 145 տոկոսով): Դեռեւս ոչ մեկի կողմից լրջորեն չի հիմնավորվել այն թեզը, թե ինչու ՀՀ-ը ստիպված էր կիրառել ավելացված արժեքի հարկը շրջանառության հարկի փոխարեն, քանի որ այդ փոփոխությունը կատարվեց նաեւ Ռուսաստանում: Միակ փաստարկն այն է, որ հա-



կառակ դեպքում, այսինքն, ավելացված արժեքի հարկը չկիրառելու դեպքում, Հայաստանը Ռուսաստանի հետ վճարային հարաբերություններում կտուժեր, քանի որ գտնվում է միասնական մաքսային տարածքում եւ էապես կախված է ռուսական ներմուծումից: Սակայն չէ որ եւ շրջանառության հարկը, եւ ակցիզները բովանդակությամբ իրար շատ մոտ են: Բոլորն էլ հանդիսանում են անուղղակի հարկերի տարատեսակներ, որոնց հարկման օբյեկտն է արտադրանքի իրացման շրջանառությունը: Հիմնական տարբերությունն այն է, որ ավելացված արժեքի հարկը բաշխվում է ապրանքն արտադրող եւ իրացնող բոլոր ձեռնարկությունների միջեւ, իսկ շրջանառության հարկը մուծվում է միայն մեկ անգամ՝ պատրաստի, վերջնական արտադրանքից: Նմանապես եւ ակցիզային հարկը, սակայն այն վերաբերում է արտադրատեսակների նեղ շրջանակին՝ ոլորտների առարկաներ, ալկոհոլային խմիչքներ, գերշահութաբեր արտադրություններ եւ այլն:

Միանգամայն իրավացի էր Ֆինանսների նախկին նախարարը, նշելով, որ ավելացված արժեքի հարկի եւ ակցիզների կիրառմանը չնախորդեցին նախապատրաստական աշխատանքներ, որոնք թեպետ ազդում է նշված հարկատեսակների գանձման արդյունավետության վրա: Ավելացնենք, որ իրեն հարգող կառավարությունը երբեւէ նման հանկարծահաս նորամուծություններ չի կատարում, այն էլ այնպիսի կարեւոր բնագավառում, ինչպիսին հարկային համակարգն է: Հուսանք, որ ստացած դասերը կբացառեն հետագայում նման դեպքերը, եւ ցանկացած նոր հարկատեսակի կիրառմանը կնախորդեն ձեռնարկատերերի, մասնագետների, հասարակության լայն խավերի հետ բազմակողմանի քննարկումը եւ լուսաբանումը:

Սակայն վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունի ավելացված արժեքի հարկի թերակատարման, ի տարբերություն շահութահարկի, ավելի լուրջ, տնտեսական պատճառ: Դա այն է, որ ձեռնարկություններն իրենց շրջանառու միջոցները լրացնում են ի հաշիվ բանկերի վարկերի, որը հետագայում մարվում է շահույթի հաշվին: Այն բույլ է տալիս ունենալ շահույթ (ինքնարժեքում հաշվարկվում են միայն օգտագործված հումքը, նյութերը), վճարել աշխատավարձ բանկերին զգալի պարտքերի պայմաններում: Որոշակի սահմաններում դա միանգամայն բնական երեւույթ է եւ բխում է բնդլայնված վերարտադրության պահանջներից: Սակայն մեր ձեռնարկությունները տեւական շրջափակումների պատճառով ստիպված են լինում զգալի քանակությամբ հումք, նյութեր եւ կիսաֆաբրիկատներ պահեստավորել, վճարելով դրանց համար ավելացված արժեքի հարկի զգալի գումարներ: Բայց մեր ձեռնարկությունները, հատկապես պետական, ունեն բարդություններ սեփական արտադրանքի իրացման, առաքված արտադրանքի դիմաց վճարումների ստացման հետ կապված: Դրա հետեւանքով ավելացված արժեքի հարկի սպասող, այսինքն մատակարարներին վճարված հարկի գումարների եւ գնորդներից ստացված հարկի գումարների տարբերությունը կազմում է շատ փոքր կամ էլ անգամ բացասական թիվ: Տուժում են եւ պետությունը, որը չի ստանում անհրաժեշտ գումարներ, եւ ձեռնարկությունները, որոնք ստիպված են լինում բարձրացնել արտադրանքի գինը:

Ակնհայտ է, որ առաջիկա մի քանի տարիներին ավելացված արժեքի հարկը չի կարող դիտվել որպես հիմնական հարկատեսակ, որն առաջացավ 1992 թ. տխուր փորձով: Իր բնույթով լինելով առաջադիմական հարկ եւ հաջողությամբ կիրառվելով մի շարք զարգացած երկրներում (հատկապես Արեւմտյան Եվրոպայի), այն ՀՀ-ում առաջիկա մի քանի տարիներին ցանկալի արդյունք չի տա թիսկալ առումով, իսկ ձեռնարկատերերի վերաբերմունքն այդ հարկի նկատմամբ գաղտնիք չէ ոչ մեկին:

Այսինքն, ՀՀ-ում բյուջետային ճգնաժամը, կապված եկամուտների անբավարար մակարդակի հետ, պայմանավորված է հարկային ոչ ճիշտ քաղաքականությամբ եւ հարկային համակարգի անարդյունավետությամբ: Թույլ է նաեւ հարկերի ազդեցությունը ձեռնարկությունների կողմից որոշումների ընդունման վրա, որոնք ցանկալի կլինեին տնտեսական քաղաքականության տեսանկյունից: Օրինակ, ինվեստիցիաների իրականացում, արտահանման-ներմուծման գործառնություններ, տարածքային տեղաբաշխման հարցեր եւ այլն:

Հարց է առաջանում, ինչպե՞ս կարելի էր խուսափել, առանց ավելացված արժեքի հարկը ներդնելու, ԱՊՀ մյուս հանրապետությունների հետ վճարային բարդությունների առաջացումից, քանզի այդ խնդիրն իրոք առկա է:

Նախ, պետք է հաշվի առնել, որ Ռուսաստանից Հայաստան ներմուծվող էներգակիրներն ունեն ֆիքսված կարգավորվող գին, որն իր մեջ արդեն ներառում է ավելացված արժեքի հարկը:

Երրորդ, կարելի էր պարզապես բարձրացնել շրջանառության հարկի հարկման բազան, այն տարածելով օրինակ առավելապես դեպի ԱՊՀ տուկա արտահանվող ապրանքների նկատմամբ, միեւնույն ժամանակ մեղմացնելով հարկի դրույքաչափի զգալի տարբերակվածությունը:

Երրորդ, ակցիզների եւ մաքսային ճկուն քաղաքականության միջոցով փորձել փոխհատուցել շրջանառության հարկի անբավարար մակարդակը:

Եվ չորրորդ, պետական բյուջեն կազմելիս հիմնվել ուղղակի հարկերի, հատկապես շահութահարկի վրա: Իսկ շահութահարկի արտոնությունները հարկավոր է ուղղել առավելապես դեպի ինվեստիցիաների խրախուսումը:

Մեծ սեզերվներ կան հատատազրված վճարների (մասնավորապես առեւտրի ոլորտում, հասարակական սննդի օբյեկտներում, խաղային բիզնեսում) եւ տեղական հարկերի (շինությունների եւ ավտոմոբիլային միջոցների տեղերից հարկ, ռենտային վճարներ) առավել ակտիվ կիրառման մեջ: Ի դեպ, ուղղակի հարկերի դերի բարձրացումը միանգամայն հնարավոր է զուգակցել նաեւ Ռուսաստանի համեմատ ավելացված արժեքի հարկի ավելի ցածր դրույքաչափերի հետ:

Ի տարբերություն անուղղակի հարկերի, որոնք գանձվում են իրացման շրջանառությունից, ուղղակի հարկերով հարկվում են եկամուտը (շահույթը) եւ գույքը (կապիտալը):

Հարկ է նշել, որ 1993 թ. կատարվել են որոշ դրական տեղաշարժեր: Ավելացված արժեքի հարկի դրույքաչափերը սահմանվել են 20 տոկոս (նախկին 28 տոկոսի փոխարեն), իսկ պետական բյուջեի նախագծում այն կորցրել է իր «գերիշխող» դիրքը: Սակայն նշված փոփոխություններն ավելի շատ հետեւանք են Ռուսաստանի հարկային քաղաքականության: Ավելին, 1993 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում բացակայում են հարկային քաղաքականության բարեփոխմանն ուղղված լուրջ միջոցառումներ (բացառությամբ ակցիզների վերաբերող մասում, որը սակայն բյուջեում իր նշանակությամբ չորրորդ հարկատեսակն է): Չնայած դրան, նշված է բյուջեի հավասարակշռությանը հասնելու անհրաժեշտության մասին: Միանգամայն կասկածելի է թվում այն քայլի արդյունքը, ըստ որի ավելացված արժեքի հարկի դրույքաչափի իջեցմանը զուգահեռ բարձրացվել է աշխատավարձի ֆոնդի նկատմամբ սոցիալական ապահովագրության մասհանումների դրույքաչափը (37 տոկոս 30-ի փոխարեն): Վերջինս մասհանվում է արտաբյուջետային ֆոնդեր եւ ինքնարժեքի մաս է կազմում, իսկ ինքնարժեքի նման արհեստական բարձրացման հետեւանքով կնվազեն շահութահարկի մուտքերը պետական բյուջե: Այսինքն շարունակվում է վերջին տարիների այն բացասական գիծը, որի պատճառով պետական ֆինանսները (բյուջետային համակարգը) վեր են ածվում տրանսֆերտներ կատարող ինստիտուտների, առանց խթանելու արտադրությունը:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ հարկային քաղաքականությունը ՀՀ-ում կարիք ունի լուրջ վերանայման:

ՍՍՍՎԵԼ ԱՎԱԳՅԱՆ

# Գոյամարտ երկու մշակույթների միջեւ

այդպիսի տարածում գտավ Ռուսաստանում: Նույնիսկ ռուսական ուղղափառ եկեղեցին շատ բանով տարբերվում է բոլորականից, իսկ ինչպես հայտնի է, բոլորական շարժումներն էին, որ հիմք հանդիսացան Արեւմուտքում թե տնտեսության, թե կիրառական գիտության զարգացման համար:

Համայնավարական ադրեւագծերը Եվրոպայում XX դարում տվեց նոր որակներ: Խոսքը սոցիալիզմի եւ նացիոնալ-սոցիալիզմի մասին է, որոնցից մեկը հիմնված էր ինտերնացիոնալիզմի, մյուսը՝ նացիոնալիզմի գաղափարների վրա: Երկու գաղափարախոսություններն էլ վախճանվեցին, քանի որ երկուսն էլ հաշվի չէին նստում մարդու էական հատկանիշների հետ: Այժմ համայնավարությունը նույնիսկ Ռուսաստանում ընդունում է իր ավանդական ծերը, համենայն դեպս, շատերն այնտեղ ձգտում են այդ նպատակին: Ավանդական ձեւի հիմնական քաղաքական հատկանիշներից են ուժեղ, կենտրոնացված իշխանությունը (XIX դար), եկեղեցու մուտքը գործունեության բոլոր բնագավառները եւ այլն: Ընդ որում, դա հատկանշական է ինչպես եվրոպական ավանդական համայնավարությանը, որի վերջին ներկայացուցիչը ըստ երեւույթին կլինի Ռուսաստանը, այնպես էլ զուտ արեւելյան համայնավարական տիրակալություններին:

Ինչպես նշվեց, համայնավարությունը հատուկ արժեքային համակարգի հիմքում ոչ թե անհատն է, այլ համայնքը: Անհատի դերի թերագնահատումը եւ ձգտումը բոլորին ապահովել կյանքի մոտավորապես նույնանման պայմաններով, համայնավարության ամենալուրջ թերությունն է:

Եթե փորձենք վերլուծել այսօրվա տեղաշարժերը, ապա կնկատենք, որ ավանդական տիպի համայնավարական պետությունները կամաց-կամաց գիջում են իրենց դիրքերը: Բայց միեւնույն ժամանակ նույն եվրոպան շատ բանում խորթ է համարում իր համար կատարվածան ամերիկյան տարբերակը, եւ եվրոպական պետությունները ձգտում են ոսկե միջինին, այսինքն, անհատի եւ համայնքի նպատակների ճկուն զուգորդմանը: Սկանդինավյան երկրներն ասվածի վառ օրինակն են:

Ինչեւէ: Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ գոյություն ուներ, եւ շատ հավանական է, որ այսօր էլ գոյություն ունի հակամարտություն, որը պայմանավորված է արեւելյան եւ արեւմտյան աշխարհընկալումներով: Ինչպես արդեն նշվեց, այդ հակամարտությունը կարող է լուծվել միայն այն դեպքում, եթե Ռուսաստանը վերջնականապես ընտրի ժողովրդավարության ուղին: Բայց այսօրվա իրադարձությունները Ռուսաստանում հարցականի տակ են դնում գործերի այդպիսի ընթացքը:

Այսպիսով, Հայաստանը պատմության մեջ արդեն որերորդ անգամ քաղաքական բարդությունների պայքարի կիզակետում է գտնվում: Եւ իրողությունն այն է, որ տվյալ դեպքում ԱՄՆ-ի դաշնակիցը Թուրքիան է: Հայ քաղաքական մտքի հրամայականն է այդպիսի իրողության մեջ ճիշտ վարվելակերպի մշակումը: Դա գերխնդիր է, քանի որ խոսքը գնում է հայերի գոյատեւելու մասին: Բնական նաբար նրանք, ովքեր մշակում են քաղաքականությունը, պետք է ստույգ պատկերացնեն հայերի, որպես էթնոսի արժեքային հատակագծի: Այսինքն, ինչքանով են հայերն արեւելյան ժողովուրդ, ինչ չափով են տուրք տալիս արեւմտյան արդեւանքներին, արդյոք հասայնավարական սկզբունքներն են որոշիչ մեզ համար, ինչ դեր է խաղում եկեղեցին, մեր պատմական անցյալը, այն, որ մենք զուրկ ենք եղել պետականությունից եւ այլն: Օրինակ, սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ ժողովրդի մեջ հասկանալի են վայելում այն կուսակցությունները, որոնք շարժվում են հասայնավարական սկզբունքներով: Ինչի՞ արդյունք է դա: Արդյոք միայն նրա, որ անցած յոթանասուն տարիներն անհետ չեն անցել, եւ այսօրվա խառնաբափոթի մեջ մարդիկ ձգտում են կայունության, թե այստեղ կան ավելի խորը պատճառներ, կապված հայի էթնոհոգեբանական կերպարի հետ ընդհանրապես: Բացի այդ, հետազոտությունները ցույց են տալիս, որ հայի կուլտուրական մակարդակն այսօր ցածր է, բայց միեւնույն ժամանակ ինքնագնահատականը բավականին բարձր: Արդյոք սա չի՞ հանգեցնում այն տխուր իրավիճակին, երբ գերագնահատելով սեփական ուժերը, արվում են քայլեր, որոնք գուցե եւ չարժեր անել: Ինչ չափով է այն փաստը, որ գոյություն ունեն պատմամշակութային կապեր Ռուսաստանի հետ, անդրադառնում այսօրվա քաղաքական իրավիճակի վրա: Կառավարման ո՞ր մոդելն է ավելի մոտ մեր խառնվածքին՝ նախագահական, թե խորհրդարանական հանրապետությունը: Ո՞ր տնտեսական մոդելն է մեր պայմաններում ավելի գործածելի՝ պետական, թե՞ մասնավոր կապիտալի գերակայությունը: Ա՞ռանց այս հարցերի պատասխանն ունենալու ամեն մի արտաքին թե ներքին քաղաքական քայլ անլուրջ կլինի:

Եւ, ըստ երեւույթին, քանի որ բոլոր մեծ տերությունների շահերը շրջանում հստակ են արտահայտված, բացառությամբ Ռուսաստանի, վերլուծողների ուշադրությունն առաջին հերթին պետք է նպատակաուղղվի Ռուսաստանի ներքին քաղաքական կյանքի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Ի՞նչ ուղով կընթանա Ռուսաստանը, արեւելյա՞ն թե արեւմտյան արժեքները կդառնան որոշիչ նրա համար՝ սա շատ լուրջ հարց է: Գուցե կրկնություն լինի, բայց աշխարհում տեղի ունեցողի հիմքում այսօր ընկած է տարբեր աշխարհընկալումների հակամարտությունը: Եւ իդեալականը հայերի համար կլիներ այն տարբերակը, որի դեպքում Հայաստանը կարողանար հանդես գալ կամրջի դերում, պատշաճեցնելով ոսկե միջինի գաղափարը: Դա կլինի հնարավոր, եթե պարզվի, որ հայերը թե արեւելյան, թե արեւմտյան արժեքների կրողներ են: Բայց քանի որ հայտնի ճշմարտություն է, որ իդեալական ոչինչ չկա այս աշխարհում, պետք է պատրաստ լինել ինքնարտահայտման ուրիշ ձեւերի:

ԱՐԱՄ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Վերջին

# ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՊՔԵՐՆ ԱԶԴՈՒՄ ԵՆ ՀՈՒՄՔԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՎՐԱ

Ինչպես նշել է «Ուոլ սթրիթ ջըռնըլ» թերթը, նույնիսկ Ռուսաստանում անկայուն իրադրության ղեկավարման դեղ-ում հազիվ թե որևէ տեսական ընդհատում առաջանա այնտեղից հումքային աղբանոցների դուրսբերման գործում: Երկրին հարկավոր է հաստատուն տարադրամ: Այդուհանդերձ, Ռուսաստանի իրադրությունը չի կարող չանդրադառնալ աշխարհի աղբանոցային շուկաների վիճակի վրա: Թերթը դա լուսաբանում է մի քանի աղբանոցախմբերի օրինակով:

Հացահատիկ: Ռուսաստանում իշխանության ղեկավարի վայրիվերումների նկատմամբ առավել զգայուն եղավ ԱՄՆ-ի հացահատիկի շուկան, ընդգծում է թերթը: Մարտի կեսերից եգիպտացորենի եւ ցորենի գները 5 տոկոսով բարձրացել են, որը այն հաղորդումների արձագանքն է, որ նախագահ Քլինթոնը զգալիորեն կավելացնի ղարեենի մատակարարումները Ռուսաստանին, ինչպես նաեւ վարկերի գումարները, եթե նախագահ Ելցինը հաղթող դուրս գա խորհրդարանի հետ մենամարտից: Վերլուծաբանների խոսքերով, գները արագորեն կիջնեն նախկին մակարդակին, եթե Ելցինը ղարտությունը կրի, եւ կոմունիստները լցնեն քաղաքական դատարկությունը:

Սովորաբար Խորհրդային Միությանը բաժին էր ընկնում ամերիկյան գյուղատնտեսության արտահանության գրեթե 5 տոկոսը: Սակայն տանը հաջողվել է նույն մակարդակի վրա պահել նախկին խորհրդային հանրապետություններին հացահատիկի մատակարարումները, բայց դրա համար նա ստիպված եղավ բանկատերերին համոզել փոխառության ձեւով Մոսկվային գրեթե 5 միլիարդ դոլար հատկացնել այդ հացահատիկի ձեռքբերման նպատակով, նրանց խոստանալով վերադարձնել այդ դրամը, երբ Մոսկվան չկարողանա վճարել: Մի քանի բանկ արդեն դիմել են ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարությանը, պահանջելով իրենց 455.5 միլիոն դոլարը վերադարձնել այն բանից հետո, երբ դա չարեց Մոսկվան:

**Էներգակիրներ**: Թեեւ Ռուսաստանում նավթի հանույթը, ինչպես տպատվում է, այս տարի կնվազի օրական եւս մեկ միլիոն տակառով, Ռուսաստանի քաղաքական վերջին իրադարձությունները դարձան նավթի գների իջեցնող գործոն: Անցյալ երկուշաբթի, հանգստյան օրերին ծագած քաղաքական ճգնաժամից հետո, նավթի գները կտրուկ նվազեցին: Օրինակ, Նյու Յորքի առեւտրային բորսայում մայիսյան ապառման նավթի գինը նվազեց մեկ տակառի դիմաց միանգամից 46 սենթով: Շաբաթվա ընթացքում գինը կրկին աստիճանաբար բարձրացավ նախկին մակարդակին:

Ինչպես զգում են փորձագետները, Ռուսաստանի իրադրությունը տեսական հեռանկարով այնուամենայնիվ գների աճ կառաջացնի էներգակիրների համաշխարհային շուկաներում: Իսկ ներկա դրությամբ, նավթարդյունաբերության հեռատեսական հիմնադրամի նախագահ Լոուրենս Գոլդսթայնի կարծիքով, առկա են գների բարձրացմանը խոչընդոտող երկու հզոր գործոններ: Անցյալ շաբաթ նավթի շուկայի բացասական արձագանքը մասամբ դրդմանավորված էր նրանով, որ Ռուսաստանի իրադարձությունները տեղի էին ունենում հենց այն ժամանակ, երբ նավթի դրահանջարկը ձմռան ավարտից հետո սկսել էր նվազել: Գոլդսթայնի եւ ուրիշ վերլուծաբանների կարծիքով, ավելի կարեւոր գործոն է դարձել այն, որ քաղաքական խնդիրների առաջացումը ավելի ու ավելի է կրճատում նավթի դրահանջարկը բուն Ռուսաստանում: Իսկ առայժմ այս տարի Ռուսաստանից նավթի արտահանությունը մնացել է զարմանալիորեն բարձր մակարդակի վրա, չնայած քաղաքական դժվարություններին, իսկ գուցե նաեւ դրանց հետեւանքով: Միջազգային փորձագետների գնահատականների համաձայն, ամբողջ նախկին Խորհրդային Միությունում 1993 թ. նավթահանույթը կկազմի օրական միջին հաշվով 8 միլիոն տակառ 1992 թ. 9 միլիոնի եւ 1989 թ. 12.2 միլիոնի դիմաց: Սակայն նավթի ներքին սպառման կրճատման դրդմաններում այս տարվա առաջին եռամսյակում Ռուսաստանից դրա արտահանությունը գերազանցեց անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Գոլդսթայնի խոսքերով, 1993 թ. առաջին եռամսյակում արտահանվել է միջին հաշվով 1.8 միլիոն տակառ, որը 400 հազարով ավելի է 1992 թ. առաջին երեք ամիսների ցուցանիշից:

Թեեւ սպասվում է, որ Ռուսաստանը բոլոր ջանքերը կգործադրի նավթի արտահանությունը շարունակելու համար, ներկա մակարդակով մատակարարումների շարունակումը բավական դժվար կլինի: Ռուսաստանի այժմյան դժվարությունները գրեթե հավասի կերոյով կիանգեցնեն արտասահմանյան երկարաժամկետ ներդրումների հեռանկարման, որոնք կոչված են օգնել Ռուսաստանին նավթի հանքավայրերի մշակման գործում:

**Մետաղներ**: Փորձագետները նշում են, որ Ռուսաստանի քաղաքական դժվարությունները գրեթե չեն անդրադարձել այդ երկրից ինչպես գունավոր, այնպես էլ սեւ մետաղների արտահանության վրա: Մեծ մասամբ մետաղական կտրուկ անկման, գերարժեզրկման եւ ռուբլու արժեզրկման հետեւանքով Ռուսաստանն արդեն 3 տարուց ավելի արեւմտյան շուկաները հեղեղում է մետաղներով, մասնավորապես ալյումինով, որոնք վաճառվում են իջեցված գներով: Անցյալ տարի Ռուսաստանում ալյումինի արտադրությունը 1 միլիոն տոննայով ավելացավ 80 տարի բվականների 200 հազար տոննա միջին տարեկան մակարդակի համեմատությամբ: Ինչպես ընդգծել է մետաղների շուկաների մասնագետ Ջերեդ Դեմլերը, «թեեւ Ռուսաստանում մետաղների մեծ մասի արտադրությունը կրճատվել է, մետաղների ներքին սպառումն էլ ավելի է նվազել դրաշտրանական արտադրության էական կրճատման եւ արդյունաբերական դրահանջարկի նվազման հետեւանքով»: «Ներքին շուկայում ունենալով մետաղների ավելցուկներ» նշել է Դեմլերը, Ռուսաստանը դրանցով հեղեղել է համաշխարհային շուկաները, դրանով իսկ իջեցնելով գները: Այնքան շատ բորոքներ են ստացվել իջեցված գներով ալյումինի վաճառքի վերաբերյալ, որ եվրոդրական միավորումն անցյալ շաբաթ հայտարարեց համադրաստխան հետաքննություն անցկացնելու մտադրության մասին»: Վերլուծաբանները նշել են Ռուսաստանի կողմից նիկելի, քրոմի եւ մի շարք ուրիշ մետաղների վաճառքի ծավալների որոշ նվազումը, սակայն գտնում են, որ դա դրդմանավորված է ավելի շատ արտահանական արտոնագրերի ստացման ձգձգումներով... Ինչպես կարծում է RTZ հանքահանույթի եւ մետաղագործական խոշոր ընկերության ավագ տնտեսագետ Ֆիլիպ Քրոուսոնը, «նույնիսկ Ռուսաստանի ներկայիս ցեցումների դրությունների այդ երկրից ստաջվա դեռ դուրս են բերվում մեծ քանակությամբ մետաղներ: Նրանք կանգ կառնեն միայն այն դեպքում, եթե խնդրվի բաշխման համակարգը»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Քաղաքական

# Կառավարական վերնախավը այնքան էլ մաքուր չէ

Համոզվելու համար, թե ինչքան է Ճապոնիան փոխվել, բավական է իրար հետ համեմատել երկու քաղաքական գործիչների Տանակայի եւ Կանեմարուի ձերբակալումները: Լինելով Ճապոնիայի ամենամեծ լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներ, երկուսն էլ իշխել են երկրին եւ երկուսն էլ ձերբակալվել ֆինանսական մեքենայությունների համար: Բայց եթե առաջինը 10 տարի առաջ կարողացավ օձիքն ազատել ու անդրադարձ մնալ, հակառակ ամերիկյան Լոկհիդ ինքնաթիռների ընկերությունից կաշառք ստանալու մեղադրանքներին, երկրորդն այժմ այդ հնարավորությունը չունի: Ժամանակները փոխվել են, եւ կասկածելի գործարքներն ապրելն այլեւս թանկի չեն:

Պրն. Կանեմարուն ձերբակալվեց մարտի 6-ին: Հաջորդ 3 օրերի ընթացքում կատարված խուզարկությունները նրա բնակարանից եւ գրասենյակից դուրս բերեցին հակայական քանակությամբ թղթադրամ, դրարտամուսներ եւ ոսկու ստանկներ, որոնց ընդհանուր արժեքը հասնում է 6 մլրդ ենի (51 միլիոն դոլար): Լոկհիդի կաշառքը չնչին գումար էր (ընդամենը 500 միլիոն ին) այս մեկի համեմատ:

Հաշվի առնելով, որ դրն. Կանեմարուն վերջերս մուծում էր ընդամենը տարեկան մոտ 10 միլիոն ին, կասկած կա, որ նա բաց թողնելով իր իսկական եկամուտները, խուսափում էր եկամտահարկերի ճիշտ վճարումից:

Սա գումարվում է անցյալ տարվա օգոստոսյան սկանդալային դեպքին, երբ զանգվածային լրատվության միջոցների ճնշման տակ նա ստիպված եղավ ընդունել, որ իրավ 500 միլիոն ինի «նվիրատվություն» է ստացել Սագավա Կյուբին կոչվող ընկերությունից, եւ հոկտեմբերին հրաժարական տվեց խորհրդարանի իր դաշնից: Քաղաքական մեկնաբանների կարծիքով, այս գործի հետեւությունը կարող է մի քանի ուրիշ կառավարական դաշնությունների «գործարքներ» բացահայտել եւ այնքան առաջ գնալ, որ հեղինակազրկելով իշխող կուսակցությանը, դատճառ դառնալ նոր կուսակցությունների առաջացմանը: Դա, իհարկե, կընդլայնի ժողովրդավարական սկզբունքների կիրառումը երկրում:

Իր հեղինակությունը դրահանելու նպատակով լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը խոստացել է քաղաքական բարեփոխումներ մտցնել հասկանալի ընտրական համակարգում: Ներկայումս գոյություն ունեցող համակարգի համաձայն, միանալով ընտրատարածքում կարող են իրար հետ մրցակցել նույն կուսակցության դաշտանող մի քանի թեկնածուներ: Սա աթիթ է տալիս, որ քվեների մեծ մասը «գնվեն» նրանցից «ամենակարողների» կողմից:

Նոր նախագիծը սահմանափակում է թեկնածուների գրանցումը, յուրաքանչյուր կուսակցությունից մեկ հոգու թույլատրելով ամեն մի տեղամասում: Դրանով նրանք հույս ունեն կրճատել կամ խաղտ վերացնել քվեարկողներին կաշառելու արմատացած սովորությը: ■

Դարձ

# Հանրաքվեի շուրջը

Պատասխանելով ապրիլի 25-ին հանրաքվեի անցկացման կարգին առնչվող հարցին, Ռուսաստանի առաջին փոխվարչապետ Վ. Շումեյկոն ընդգծել է, որ նախագահի եւ կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության նկատմամբ վերաբերմունք դրսեւորելու մասին ժողովրդագամավորների IX հանգումարի առաջադրած հարցն անօրինական է: Ինչպես հայտնի է, հանրաքվեի մասին Ռուսաստանի օրենքը արգելում է հանձժողովրդական քննարկման դնել բյուջետային եւ ֆինանսական քաղաքականության հարցեր: Նա նաեւ հայտնել է, որ ներկայումս լրամշակվում է նոր սահմանադրության հարցը հանրաքվեի դնելու գաղափարը: Ընդամենը ենթադրվում է օգտագործել օրենքի այն դրույթը, որը թույլատրում է իրենց հարցերն ավելացնել հանրաքվե անցկացնելիս:

ԱՍԵՐՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

# Իրանը «միջազգային հանցագործ»

ԱՄՆ պետական քարտուղար Ռ. Քրիստոֆերը արտահայտվել է լիբիական նավթի գնումների վրա «համաշխարհային արգելքի» հաստատման օգտին, քանի որ Լիբիան հրաժարվում է հանձնել չորս տարի առաջ ավերիկյան մարդատար օդանավի պայթեցման մեջ կասկածվող երկու ահաբեկիչներին: Նա Լիբիային մեղադրել է այդ հարցի լուծումը ձգձգելու համար: «Ես գտնում եմ, որ ժամանակն է խստացնել նավթային արգելքը Լիբիայի նկատմամբ», ասել է պետքարտուղարը սենատի հատկացումների կոմիտեի ենթակոմիտեում կայացած ունկնդրումների ժամանակ:

Պետքարտուղարը միաժամանակ Իրանին անվանել է «միջազգային հանցագործ»: «Իրանն իրենից ներկայացնում է ամբողջ աշխարհում ահաբեկչական խմբերին դրաստանող հիմնական աղբյուրներից մեկը», ասել է նա: Քրիստոֆերը հայտարարել է, որ ԱՄՆ-ը կջանա շրջափակել Թեհրանին համաշխարհային բանկին հատկացնելիք 141 միլիոն դոլարի ֆինանսական օգնությունը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

# Ուկրաինայի դիրքորոշումը

Լրատվական գործակալությունների այն հաղորդման կատարությամբ, թե մարտի 31-ին Ռուսաստանի դաշտանության նախարար Պ. Գրաչովը համաշխարհային ընկերակցությանը կոչ է արել ճնշում գործադրել Ուկրաինայի վրա, Ուկրաինայի դաշտանության եւ արտաքին գործոց նախարարությունները հայտարարել են. «Ուկրաինայում միջուկային զենքի հարցերը ներկայումս ենթարկվում են երկրի խորհրդարանում, որը կընդունի Ուկրաինայի ժողովրդի եւ դեպության շահերին համադրասխանող որոշում: Ուկրաինայի տարածքում գտնվող միջուկային զենքի շուրջը արհեստականորեն ստեղծված իրարանցման նպատակն է հասնել այդ զենքի վրա Ռուսաստանի իրավադրության տարածմանը եւ Ուկրաինային զրկել այդ զենքի բաղադրիչների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից: Այսպիսով, մենք գործ ունենք ահաբեկման հերքական փորձի հետ»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Լուրերի հոսք

## Հարցում հանրաքվեին զուգահեռ

Բորիս Ելցինը ապրիլի 25-ի հանրաքվեին զուգահեռ հավանաբար հարցում կանցկացնի նոր սահմանադրության վերաբերյալ: Ինչպես մարտի 31-ին Եկատերինբուրգում հայտարարեց Սվերդլովսկի մարզում նախագահի ներկայացուցիչ Վիտալի Մալկովը, այդ մասին «հայտնի կդառնա մոտակա 1-2 օրը»: Նրա խոսքերով, ժողովրդագամավորների 9-րդ հանգումարը հանգեցրել է սահմանադրական ճգնաժամի: Ներկայումս, ասաց նա, Եկատերինբուրգում եւ Սվերդլովսկի մարզում ստեղծվում են նախաձեռնող խմբեր՝ հանրաքվե եւ հարցում անցկացնելու համար: Եթե դաշտանական կառույցները հրաժարվեն անցկացնել հարցումը, նախատեսվում է անցկացնել ձեռնարկություններում կամ սոցիոլոգիական հետազոտությունների օգնությամբ: Խոսելով իրադրության հավանական զարգացման մասին նախագահի դարտության դեղոում, Մալկովը համոզվածություն հայտնեց, որ 100 տոկոսի հավանականությամբ Գերագույն խորհրդի ղեկավարությունը կխլի իշխանությունը: «Այդ քայլը նախադատրաստված է, ոչ մի հույս չկա, որ Գերագույն խորհուրդը կվերափոխվի», հայտարարեց Մալկովը: Մինչդեռ, ՌԴ Ֆեդերալ լրատվական կենտրոնի ղեկավար Պոլտորանինը հայտնեց, թե Ելցինը այլընտրանքային հանրաքվե չի անցկացնի: ԻՖ

## Չինաթափմանը նվիրված գիտաժողով Տոկիոյում

Ապրիլի 19-20-ը Տոկիոյում կանցկացվի միջազգային գիտաժողով «Միջուկային զենքի վերացումը եւ պլուտոնիումը» թեմայով: Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Բելառուսի միջուկագետները եւ կառավարման շրջանների ներկայացուցիչները կքննարկեն նախկին ԽՍՀՄ միջուկային համալիրների աղտոտնաժման հետ կապված խնդիրներ: Գիտաժողովի կազմակերպիչներն են Ճապոնիայի խաղաղության հարցերի ինստիտուտը եւ Հարվարդի համալսարանին առընթեր համաշխարհային գիտության ու հիմնահարցերի ինստիտուտը: Անցյալ տարի կայացած սեմինարի մասնակիցների հաշվարկների համաձայն, ԽՍՀՄ միջուկային զենքի վերացման համար պահանջվում է 5 մլրդ դոլար: Սնարկ

## Շեւարդնաձեն ընդունում է իրանցի դիվանագետին

Մարտի 31-ին Թբիլիսիում էդուարդ Շեւարդնաձեն հանդիպում ունեցավ Վրաստանում Իրանի գործերի ժամանակավոր հավատարմատար Ֆաթրադդին Խակբինի հետ: Զրույցի ժամանակ Շեւարդնաձեն հայտարարեց, որ երկու երկրների միջեւ բարիդրացիական կապերի կարգավորումը մեծ նշանակություն ունի Անդրկովկասում խաղաղություն հաստատելու համար: Կարծիքներ փոխանակվեցին համաձայնագրերի իրականացման ընթացքի մասին, որոնք կնքվեցին Շեւարդնաձեի Թեհրան կատարած այցելության ժամանակ: Խակբինը հաղորդեց, թե նախատեսվում է Իրանի կառավարական դաշտվիրակության այցը Թբիլիսի: Նա նշեց, որ առաջին իսկ օրերից, երբ Վրաստանը դարձավ անկախ դետություն, Իրանը փորձում է նրա հետ հարաբերությունները կառուցել բարիդրացիության եւ փոխշահեցման ոգով: ԻՖ

## Գաղթականների եւս մեկ խնդիր

Ռուսաստանի միջին գոտում այսօր աշխատանքով ապահովված է գաղթականների 23 տոկոսը, մարտի 31-ին գրել է «Լիտերատուրնայա գազետա»-ն: Եթե Սամարայի երկրամասում աշխատում է վերաբնակների միայն 2 տոկոսը, ապա Ինգուշիայում եւ Ուլյանովսկի մարզում ավելի քան երկու երրորդը: Գաղթականների վիճակը կախված է ոչ միայն աշխատանքից, այլեւ գրանցումից: Դաղստանում, Մոսկվայում եւ հարավային մարզերում նրանց մեծ մասը գրանցում չունի, մինչդեռ Ուրալում եւ Պովոլժիեում այս հարցում ամեն ինչ կարգին է: Աշխատանք գտնելն ամենից դժվար է կենտրոնական եւ հարավային Ռուսաստանի խոշոր քաղաքներում: Սնարկ

digitised by A.R.A.R.@

Մարզական

## Ռուսաստանի հաղթաթղթերը Սերբիայում

Սերբիայի Կրագուևաց քաղաքի մոտակայքում, Բոնիցա գյուղից ոչ հեռու մի լիճի ոտարեկախումբը գտել է Դաշնակցային Ռուսաստանի 24 ամյա հաղթաթղթի ելենա Մաեւսկայայի դիակը: Նաեւ հաղորդվում է, որ մարմնական ծանր վնասվածքներ է ստացել նրա խորթ հայրը՝ Օլեգ Էդիլը, որը գտնվում է Կրագուևացի հիվանդանոցում: Նրա ցուցմունքների համաձայն, ելենային սպանել են Դաշնակցային Ռուսաստանի երկու հաղթաթղթեր, որոնց հետ իրենք Հարավսլավիա էին մեկնել զբոսաշրջիկային այցագրերով: Էդիլը վերհիշել է նրանցից միայն մեկի անունազգանունը: Սերբիայի ոստիկանությանն առաժմ չի հաջողվել բռնել կասկածյալներին: Տեղի իրավապահ մարմինները գտնում են, որ հանցագործության դաշտաքը եղել են «դրամական հաշիվները»: Սնարֆ

## Անդրկովկասում արտոնություններ ռուսաստանցի զինծառայողներին

Դաշնակցային Ռուսաստանի դաշտպանության նախարարության մամուլի կենտրոնի հաղորդման համաձայն, ռուսաստանցի զինծառայողներին համապատասխան օրենքով զգալի արտոնություններ են տրվում: Այսպես, սպաներին, դրոշակրիչներին, միջմասներին եւ գերաժամկետ ծառայության զինծառայողներին ոոծիկներ եւ զինվորական կոչման ոոծիկներ են վճարվում տվորականից մեկ ու կես անգամ ավելի: Օրինակ, 345-րդ օդադեսանային գնդի զինծառայողները, որոնք այժմ դաշտպանում են Գուդաուտայի օդանավակայանը եւ հավասարեցված են խաղաղարար ուժերին, ստանում են. լեյտենանտը՝ 38 հազար ռուբլի, փոխգնդապետը՝ 54 հազար, իսկ ժամկետային ծառայության զինվորը՝ 18.400 ռուբլի: Ուրիշ արտոնությունների թվում է ամենամյա վճարովի 14 օրյա արձակուրդը: Զինծառայողների կացարանը կամրագրվի տվյալ շրջանում ծառայելու ամբողջ ժամանակամիջոցում: Նոր արտոնությունները տարածվում են նաեւ Բալթյան երկրներում եւ Տաջիկստանում ծառայող ռուսաստանցի զինծառայողների վրա: Սնարֆ

## Սահմանապահները ե՞րբ կհեռանան Վրաստանից

Պատասխանելով լրագրողների այս հարցին, Վրաստանի սահմանապահ զորքերի հրամանատար, գեներալ մայոր Պանտելեյմոն Գիորգաձեն հայտարարեց, որ մինչեւ 1993 թ. կեսերը ռուսաստանցի սահմանապահների 5 տոկոսը կհեռանա Վրաստանից, մինչեւ դեկտեմբեր՝ եւս 15 տոկոսը: Ռուսաստանցի վերջին սահմանապահը երկրից դուրս կգա 1994 թ. վերջերին, սակայն Վրաստանը, ըստ Գիորգաձեի խոստովանության, առայժմ չի կարող ապահովել իր սահմանների անվտանգությունը: Սնարֆ

## Բուսիրկայի կալանավորները համագումարի մասին

«Լիտերատուրնայա գազետա»-ն մարտի 31-ի համարում հրապարակել է Բուսիրկայի կալանավոր արդեսկոմակաների դատողությունները ժողովրդավարների արտահերթ համագումարի մասին: Ահա որոշ նմուշներ. «Մեզ համար միեւնույն է, թե ով կհաղթի, Ելցինը, թե այդ ավազակախումբը», «Ոչ, Ելցինն իսկական տղամարդ է. հարկավոր է բռունցքդ դեմ անել նրանց բերանին», «Սահմանադրական դատարա՞ն: Հրմ: Թեեւ դատարան է, բայց նույն մուրթներն են», «Ուրցկոյը կվերցնի իշխանությո՞ւնը: Իսկ ո՞վ է նա: Դե, գիտեմ, որ փոխնախագահ է, բայց ո՞վ է, գիտեմ, որ օդաչու է, բայց ո՞վ է, որ իշխանությունը վերցնի: Նա օդաչու է, իսկ ես խոզաբուծ, հետո ինչ, ես հո չեմ ծգտում նախագահ դառնալ»: Սնարֆ

# ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ



1994 թ. աշխարհի առաջնության (ԱՄՆ) եվրոպական ընտրական 6 խմբերից 5-ում կայացան հերթական հանդիպումները: Առաջին խմբի դոտեցնցիալ առաջատարը՝ Շվեյցարիայի հավաքականը, սեփական հարկի տակ միավոր կորցրեց Պորտուգալիայի թիմի հետ խաղում (1:1), բայց 5 խաղից հետո վաստակելով 8 միավոր, հավասարվեց իրական առաջատարին՝ Իտալիայի հավաքականին:

2-րդ խմբում ընդգրկված Անգլիայի ընտրանին Սամբուլում 2:0 հաշվով հաղթեց Թուրքիայի հավաքականին եւ 4 խաղից հետո վաստակելով 7 միավոր, նույնքան հավասարվեց առաջատարներին՝ Նորվեգիայի եւ Հոլանդիայի հավաքականներին: Հարկ է նշել, որ վերջինս մեկ ավելի խաղ է անցկացրել:

3-րդ խմբում տեղի է ունեցել 2 հանդիպում:

Իռլանդիայի հավաքականը, հյուրընկալելով Հյուսիսային Իռլանդիայի թիմին, հաղթել է 3:0 հաշվով, իսկ Եվրոպայի չեմպիոն Դանիայի հավաքականը նույնքան սեփական հարկի տակ 1:0 հաշվով առավելության է հասել առաջատար Իսպանիայի հավաքականի նկատմամբ: Դա խաղանցիների 1-ին պարտությունն է, որը էիկացրեց պայքարը 3 թիմերի՝ Դանիայի, Իսպանիայի եւ Իռլանդիայի հավաքականների միջեւ:

Հիմա խաղանցիներն ունեն 9, իռլանդացիները՝ 8, դանիացիները՝ 7 միավոր, բայց Իսպանիայի հավաքականն անցկացրել է 7, իսկ վերջին երկուսը՝ 5-ական հանդիպում:

4-րդ խմբում առձանագրվեց անակնկալ:

Առաջատարը Բելգիայի հավաքականը, որը վերեւից է հանդես գալիս աշխարհի առաջնության ընտրական այս շրջափուլում եւ 12 հնարավորից նույնքան միավոր է վաստակել, այս անգամ մրցակցի դաշտում 0:2 հաշվով զիջեց Ուելսի թիմին, բայց միեւնույն է, գործնականում կարելի է ասել, որ գրեթե արդահովել է ԱՄՆ-ում հանդես գալու իրավունքը:

5-րդ խմբում նույնպես առձանագրվեց անակնկալ: Հունգարիայի հավաքականը Բուդապեշտում 0:1 հաշվով զիջեց Հունաստանի թիմին: Դա զգալիորեն բարձրացրեց վերջինս աշխարհի առաջնության եզրափակիչի ուղեգրին տիրելու հնարավորությունները:

Համենայն դեպս, Հունաստանի հավաքականը 5 խաղում ընդամենը մեկ միավոր է կորցրել եւ վստահորեն գլխավորում է 5-րդ խմբի մրցաշարային աղյուսակը: Այս խմբում ընդգրկված է նաեւ Ռուսաստանի հավաքականը, որը 2 խաղից հետո 4 միավոր ունի եւ ապրիլի 14-ին հյուրընկալելու է Լյուքսեմբուրգի հավաքականին:

Ահա եվրոպական բոլոր 6 ընտրական խմբերի մրցաշարային աղյուսակները այսօրվա դրությամբ.

1-ին խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շվեյցարիա | 5 | 3 | 2 | 0 | 14-3 | 8 |
| 2. Իտալիա | 5 | 3 | 2 | 0 | 13-5 | 8 |
| 3. Շոտլանդիա | 4 | 1 | 2 | 1 | 4-3 | 4 |
| 4. Պորտուգալիա | 4 | 1 | 2 | 1 | 3-4 | 4 |
| 5. Էստոնիա | 2 | 0 | 1 | 1 | 0-6 | 1 |
| 6. Մալթա | 6 | 0 | 1 | 5 | 2-15 | 1 |

Այս խմբում հաջորդ հանդիպումը տեղի կունենա ապրիլի 14-ին: Իտալիայի հավաքականը կընդունի Էստոնիայի թիմին:

2-րդ խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Նորվեգիա | 4 | 3 | 1 | 0 | 15-2 | 7 |
| 2. Անգլիա | 4 | 3 | 1 | 0 | 13-1 | 7 |
| 3. Հոլանդիա | 5 | 3 | 1 | 1 | 15-6 | 7 |
| 4. Թուրքիա | 7 | 2 | 0 | 5 | 8-14 | 4 |
| 5. Լեհաստան | 2 | 1 | 1 | 0 | 3-2 | 3 |
| 6. Սան Մարինո | 6 | 0 | 0 | 6 | 1-30 | 0 |

Ապրիլի 28-ին
Անգլիա-Հոլանդիա
Նորվեգիա-Թուրքիա
Լեհաստան-Սան Մարինո

3-րդ խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իսպանիա | 7 | 3 | 3 | 1 | 13-1 | 9 |
| 2. Իռլանդիա | 5 | 3 | 2 | 0 | 9-0 | 8 |
| 3. Դանիա | 5 | 2 | 3 | 0 | 2-0 | 7 |
| 4. Հս. Իռլանդիա | 6 | 2 | 2 | 2 | 7-7 | 6 |
| 5. Լիտվա | 6 | 1 | 3 | 2 | 5-10 | 5 |
| 6. Լատվիա | 7 | 0 | 4 | 3 | 3-13 | 4 |
| 7. Ալբանիա | 6 | 1 | 1 | 4 | 3-11 | 3 |

Ապրիլի 14-ին
Դանիա-Լատվիա
Լիտվա-Ալբանիա

4-րդ խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Բելգիա | 7 | 6 | 0 | 1 | 12-3 | 12 |
| 2. Ռումինիա | 5 | 3 | 1 | 1 | 17-4 | 7 |
| 3 Ուելս | 5 | 3 | 0 | 2 | 10-7 | 6 |
| 4. Չեխո-Սլովակ. | 4 | 1 | 2 | 4 | 7-4 | 4 |
| 5. Կիպրոս | 6 | 1 | 1 | 4 | 4-10 | 3 |
| 6. Ֆարերյան կղ. | 5 | 0 | 0 | 5 | 0-22 | 0 |

Ապրիլի 14-ին
Ռումինիա-Կիպրոս

5-րդ խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Հունաստան | 5 | 4 | 1 | 0 | 5-0 | 9 |
| 2. Ռուսաստան | 2 | 2 | 0 | 0 | 3-0 | 4 |
| 3. Հունգարիա | 4 | 1 | 1 | 2 | 4-3 | 3 |
| 4. Իսլանդիա | 4 | 1 | 0 | 3 | 2-4 | 2 |
| 5. Լյուքսեմբուրգ | 3 | 0 | 0 | 3 | 0-7 | 0 |

6-րդ խումբ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ֆրանսիա | 5 | 4 | 0 | 1 | 9-3 | 8 |
| 2. Շվեդիա | 3 | 3 | 0 | 0 | 6-1 | 6 |
| 3. Բուլղարիա | 4 | 3 | 0 | 1 | 7-2 | 6 |
| 4. Ավստրիա | 3 | 1 | 0 | 2 | 5-5 | 2 |
| 5. Ֆինլանդիա | 3 | 0 | 0 | 3 | 1-6 | 0 |
| 6. Իսրայել | 3 | 0 | 0 | 3 | 3-10 | 0 |

Ապրիլի 14-ին
Ավստրիա-Բուլղարիա

Հիշեցնենք, որ խմբերում առաջին 2 տեղ գրաված թիմերն իրավունք կստանան հանդես գալու աշխարհի 1994 թ. առաջնության եզրափակիչում: ■

# Աբրահամ Հայրապետյան. «Չի կարելի վստահությունը կորցնել»

Կրկին Երեւանում է գտնվում Հայաստանի մարզասեր հասարակայնությանը քաջ ծանոթ Ֆրանսիայի «Հայաստան-2000» հայկական մարզական ասոցիացիայի նախագահ Աբրահամ Հայրապետյանը: Մի մարդ, որը վաղուց հազար թելերով կապված է մայր հայրենիքի մարզական կյանքին: Աբրահամ Հայրապետյանի հրավերներով են Երեւանի «Արարատ»-ը 1980, 1989 թթ., Աբովյանի «Կոտայք»-ը 1990 թ. մրցաշրջագայության մեկնել Ֆրանսիա, իսկ Ֆրանսիայի «Մարտիգ» թիմը 1983 թ. նրա գլխավորությամբ ժամանել է Հայաստան: Ի դեպ, «Մարտիգ»-ը հիմա Ֆրանսիայի 2-րդ դիվիզիոնի առաջնության առաջատարներից է:

1991 թ. նոյեմբերի 25-ին հենց Աբրահամ Հայրապետյանի ակտիվ նախաձեռնությամբ Ֆրանսիայում կազմակերպվեց մարզական շոու-հանդես, որին հրավիրված էին բոլոր ժամանակների հայկական մարզական աստղերը, աշխարհի եւ օլիմպիական խաղերի չեմպիոնները: «Հայաստան-2000» մարզական ասոցիացիայի պատվավոր նախագահներից մեկը մեր անվանի հեռացակոր Ռոբերտ Էմմիյանն է: Նույն ասոցիացիայի անդամ է նաեւ «Արարատ»-ի նախկին ռմբարկու Համլետ Մխիթարյանը, որը հիմա վերելով հանդես է գալիս Ֆրանսիայի «Վալանս» թիմում (2-րդ դիվիզիոն, 6-րդ տեղ):

Համլետ Մխիթարյանը Ֆրանսիա տեղափոխվեց Աբրահամ Հայրապետյանի ակտիվ միջամտությամբ:

**- Ինչպե՞ս եք տեսնում «Հայաստան-2000» կազմակերպության ապագան:**

- Կուզեի, որ մարզական լիիրավ դեսպան դառնայինք Ֆրանսիայում: Դրա համար անհրաժեշտ է, որ Հայաստանի բոլոր մարզական ֆեդերացիաները «Հայաստան-2000»-ի միջոցով կարող հաստատեին Ֆրանսիայի հետ, մանավանդ որ այստեղ մեզ արդեն ճանաչում են: Մենք պետք է պաշտոնական մարմին դառնանք: Մեր գլխավոր նպատակը սպորտի միջոցով Հայաստանի անկախությունն աշխարհին ճանաչել տալն է: Ցավոք, դժվարությունները եւ անհամաս խոչընդոտները շատ-շատ են:

**- Ի՞նչը նկատի ունեք:**

- Հանձնարարակցելը շատ դժվար է: Ես արդեն շուրջ 100 նամակ եմ ուղարկել տարբեր ասիթներով, բայց երեւի ընդամենը 4 պատասխան եմ ստացել: Սիրավասիկ վերջերս մեծ դժվարությամբ Ֆրանսիայում համոզեցի, որ մինչեւ 16 տարեկան ֆուտբոլիստների Հայաստանի հավաքականին ընդգրկեն Փարիզում ապրիլի 9-ից 11-ը կայանալիք միջազգային խոշոր մրցաշարում, որի 12 մասնակիցների թվում են այնպիսի հանրահայտ ակումբների պատանիներ, ինչպիսիք են Մադրիդի «Ռեալ»-ը, Մյունխենի «Բավարիա»-ն, Ամստերդամի «Այաքս»-ը, Լիսաբոնի «Բենֆիկա»-ն, Դանիայի չեմպիոն «Բրոնդբյու»-ն, Փարիզի «Ռեսինգ»-ը եւ այլն:

Համաձայնվեցին: Հայաստանից մրցաշարին մասնակցելու երաշխավորագիր ստացվեց: Այդ մրցաշարը Հայաստանի հավաքականի համար Եվրոպայի առաջնությանը նախապատրաստվելու հիանալի ասիթ կլիներ, չէ որ այս տարի նրանք աշխարհամասի առաջնության խմբային ընտրական մրցաշարում պետք է հանդիպեն Հունգարիայի եւ Ուկրաինայի հավաքականների հետ: Ցավոք, միայն հիմա պարզվեց, որ հավաքականը ֆինանսական պատճառներով չի կարող մեկնել Ֆրանսիա, իբր հովանավորը վերջին պահին հրաժարվել է: Դա արդեն լուրջ գործ չէ: Չի կարելի կորցնել դիմացինի վստահությունը: Մեկ անգամ հուսախաբ անելուց հետո առաջիկայում այլեւս որեւէ մեկը չի համարձակվի վստահել ձեզ: Արեւմուտքում խոստումն ամեն ինչից թանկ է, չէ՞ որ մարդիկ հավաքալով նախապես ծախսեր են անում: Այդպես կփակեմ բոլոր ճանապարհները:

Ես այս անգամ սիրված այդ մտահոգիչ հարցով եմ եկել Հայաստան: Պետք է մտածել միջոցներ գտնել նման տհաճ անակնկալներից խուսափելու համար: ■

# 1/8 եզրափակիչի մեկնարկն այսօր

Այսօր եւ վաղը տեղի կունենան ֆուտբոլի Հայաստանի հանրապետության գավաթի 2-րդ խաղարկության 1/8 եզրափակիչի հանդիպումները: Նախորդ փուլի պես այս անգամ էլ զույգերն իրար հետ կհանդիպեն մեկական անգամ: Հաղթող թիմերը դուրս կգան քառորդ եզրափակիչ, որից սկսած, ներառյալ կիսաեզրափակիչ հանդիպումները, զույգերը միմյանց հետ կմրցեն երկուական անգամ՝ սեփական եւ մրցակցի դաշտում:

Ճշտված տվյալներով, նախորդ փուլում էջմիածնի «Զվարթնոց»-ը «Լույս-Արարատ»-ին 4:2 հաշվով հաղթել է ոչ թե 11 մ. հարվածներով, այլ լրացուցիչ ժամանակում:

Ահա 1/8 եզրափակիչ հանդիպումների տեղն ու ժամանակը.

**2.04.93 թ., ժամը 15.00**
Ֆուտ. հանր. դպրոցի մարզադաշտ
**«Կիլիկիա»-«Արարատ»**
Արմավիրի «Հրաչյա» մարզադաշտ
**ՀՄԸՄ-«Կանաչ»**
Էջմիածնի քաղաքային մարզադաշտ
**«Զվարթնոց»-«Շիրակ»**
Երեւանի «Նաիրի» մարզադաշտ
**ՀՍՄ ՖԻՍՍ-«Ախթամար»**
Աբովյանի քաղաքային մարզադաշտ
**«Քասախ»-«Վան»**
Երեւանի Էրեբունի շրջ. սպորտ դպրոցի մարզադաշտ
**«Բանանց»-«Իմպուլս»**
**3.04.93 թ. ժամը 15.00**
Էջմիածնի քաղաքային մարզադաշտ
**«Երազանք»-«Կոտայք»**
Երեւանի «Նաիրի» մարզադաշտ
**«Նաիրիտ»-«Ցեմենտագործ»**

# Դարձյալ «Ժալգիրիս»-ը

Ավարտվում է բասկետբոլի նորաստեղծ միջազգային լիգայի անդրանիկ առաջնությունը, որին մասնակցում են բասկետբոլային համբավ ունեցող նախկին ԽՍՀՄ հանրապետությունների տղամարդկանց ուժեղագույն թիմերը:

Ամենահիշողասակիր թիմերից մեկը՝ Կաունասի «Ժալգիրիս»-ն արդեն դուրս է եկել եզրափակիչ:

Կիսաեզրափակիչում «Ժալգիրիս»-ը մրցեց Տալլինների «Կալեւ»-ի հետ: Երկու խաղից հետո կողմերը մեկական հաղթանակ էին տարել: Լրացուցիչ հանդիպումն ավարտվեց «Ժալգիրիս»-ի օգտին 101-94 հաշվով:

Եզրափակիչում «Ժալգիրիս»-ն ուժերը կչափի մյուս կիսաեզրափակիչ զույգի՝ Սանկտ Պետերբուրգի «Սոյուզ»-ի եւ Լուգանսկի «Սոյուզ»-ի հաղթողի հետ:

Երեւի ժամանակն է մտածել մեր ներ կայացուցիչն էլ ունենալ այդ մրցաշարում: Միայն այդ դեպքում երիտասարդ բասկետբոլիստները գործնական փորձ ձեռք կբերեն: Թե չէ անհամաս է հանդարտասից միջազգային պատասխանական մրցաշարերին ներգրավվելը (խոսքն աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների մասին է): ■

# Ելցինը աշխարհի 891-րդ թենիսիստ

Այդպիսի անակնկալ հայտարարություն է արել պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիան (ԱՏՊ): Ինչպես ԻՄԱ-Պրեսի թղթակցին հայտարարել է ասոցիացիայի մամուլի կցորդը, ուսումնասիրելով ՊԱԿ-ի բացված արխիվները, որի մասին իմը Ռուսաստանի նախագահը չգիտես ինչու լռում է, 1963 թ. ապրիլին Ելցինը ծածկանունով մասնակցել է Ջալցբուրգի (Ավստրիա) թենիսի միջազգային մրցաշարին, որտեղ հասել է մինչեւ քառորդ եզրափակիչ: Այսօր ԱՏՊ ղեկավարությունը մտածում է այն մասին, որպեսզի ռեյտինգի այդ հաշվը ամրագրի Ելցինին: ■

# «Ֆեյենորդ»-ը նոկաուտի մեջ

Հոլանդական այս հանրահայտ թիմը եվրոպական երկրների գավաթակիրների գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչի 2 խաղերում զիջելով Մոսկվայի «Սպարտակ»-ին, ուշի չի գալիս: «Ֆեյենորդ»-ը Հոլանդիայի գավաթի խաղարկության կիսաեզրափակիչում իր համար անսովոր 0:5 խոշոր հաշվով զիջել է իր մշտական մրցակիցներից այդ երկրի ոչ պակաս անվանի թիմերից մեկին՝ Ամստերդամի «Այաքս»-ին: ■

Բաժինը վարում է ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Մշակույթ

# Աբսուրդով շաղախված զուգարանակոնք

«Այս ցուցահանդեսը կարող է դառնալ սիմվոլիկ, ինչ-որ բան խորհրդանշող, բայց ոչեմ չէ դրա մեջ ինչ-որ բնմա փնտրել: Ազաս աղրենք...», իր ցուցահանդեսն այսպես ներկայացրեց Ազաս Սարգսյանը: «Նկարիչ եմ, եւ ամբողջ կյանքում էլ նկարիչ եմ եղել... Ավարտելը ոչ մի բան էլ չեմ ավարտել, տարբեր տեղերում ազաս ունկնդիր եմ եղել... Դա էլ է կոնցեպցիա՝ Ազաս անվանս համադասխան»:

Երեկ Աբովյան փողոցի վրա, «Մանկական աշխարհ» հանրախանութից ներքեւ գտնվող այժմ չինարարական ավերակի կոչման հավակնող մի վայրում, որ նախկինում գրախանութ էր, իսկ այժմ կեղտ, փոշի ու անտերություն, բացվեց մի ցուցահանդես, որն ըստ հեղինակի՝ նկարիչ Ազաս Սարգսյանի, ոչեմ է տեւեր մի քանի ժամ: Բացի այն, որ Հայաստանի ազգային ֆիլմադարանի նախաձեռնած այդ ցուցահանդեսը, որը միայն արտաքուստ կարելի է այդպես կոչել, անցկացվեց մի ստորհնակ ու անշուք տեղում, արտասովոր էր նաեւ ներկաներին մատուցված ցուցադրությունը՝ բեռներ ոչաներին մի քանի նկար, սեւ ու սպիտակի հակադրություններ, աբսուրդի հասնող անբացատրելիությամբ հեծանիվի անիվ եւ տարածության մի անկյունում զուգարանակոնք, որի վրա ցուցահանդեսի սկիզբը նախանշող մի առավել սիմվոլիկ ու ներկաներին զարմանք ու համատարած առեւտրային շարժումներից գոնե ինչ-որ ոչահ կտրվելու հնարավորություն ընձեռող արարողությունից հետո ի վերջո հանգրվանեց նկարիչը:

Առօրյա միաղաղությունից հետո այդ ցուցահանդեսն իր տարօրինակությամբ ու առայժմ անկրկնելի բովանդակությամբ մարդկանց թերեւս առաջարկեց ոչ միայն մտածել միայն տրանսպորտի, հացի մասին:

Ցուցահանդեսին ներկա գտնվող ՀՀ մշակույթի նախարար Հակոբ Մովսեսը, որը մեր հարցին ոչատասխանելով նշեց, թե ինքը ներկա է ոչ միայն ի ոչաբոնն, այլ նաեւ որովհետեւ «այս նկրտումներն ինձ խորթ չեն, եւ ես այստեղ եմ նաեւ որպես արվեստասեր», ցուցահանդեսի անցկացման վայրի վերաբերյալ ասաց, որ այս տիպի նկարչության «գոյության խոզաբները մտնելու» տրամադրությունն է հեղինակին մղել այս վայրն ընտրելու: «Տարածությունը եւ ցուցահանդեսը ոչեմ է դիտել միմյանց շարունակություն»:

Գ. Ն.


«ՈՒՅՈՒՏ»

«Ույուտ» տուրիստական ֆիրման զբոսաշրջիկներին առաջարկում է իր ծառայությունները հետեւյալ երթուղիներով.

1. Երեւան-Բուրգաս-Երեւան (7 օր, ուղիղ չվերթով: Ինչպես աղասարկո.ով, այնպես էլ ինքնաթիռի տոմսով):
2. Սոչի-Բուրգաս-Սոչի (7 օր, ամեն հինգշաբթի)
3. Սոչի-Սամբուլ (ցերմանավով)
4. Սոչի-Տրապիզոն (ցերմանավով)
5. Շրջագայություն Միջերկրական ծովով, «Այվազովսկի» հարմարավետ ցերմանավով, մայիսի 4-15-ը. Յալթա-Պիրեյ (Հունաստան)-Բեյրութ (Լիբանան)-Լարնակա (Սիրիա)-Սամբուլ (Թուրքիա)-Յալթա:

Մեր հասցեն՝ Հ. Հակոբյան 2 (Մերգելյան ինստիտուտի դիմաց)
Հեռ. 27-24-50, 27-20-08

PUBLISET



LEVON TRAVEL

ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ
ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ՆՅՈՒ ՅՈՐՔ
Ամենահարմար գներով

PUBLISET

ԵՐԵՎԱՆ, Սայաթ-Նովա 10 հեռ. 582-831, 567-208 LEVON TRAVEL



«ԼՈՒՅՍ-90»

«Լույս-90» գրավաճառը գրավի դիմաց վճարում է կանխիկ դրամ ամենացածր տոկոսներով, օրական 1 տոկոս:
Գրավաճառը երաշխավորում է բոլոր տեսակի գործողությունների հասկություն եւ ճշգրիտ ժամանակ:
Հեռ. 77-79-40
Աշխատում է ամեն օր, ժամը 11-16-ը, հանգստյան օրը կիրակի:
Հասցեն՝ Երեւան, Աբովյանի փող. 78, 1Փարոս մեքենաների մոտ, տրանվայի կենտրոնական կանգառ:



ԻՆԿՈ

«Ինկո» բաժնետիրական բանկի Հայաստանի մասնաճյուղը կատարում է արագ դրամական փոխանցումներ Դաշնակցային Ռուսաստանից Ուկրաինա, Հայաստանից Ուկրաինա եւ Ռուսաստանից Հայաստան:
«Ինկո» բաժնետիրական բանկի Հայաստանի մասնաճյուղի հասցեն է՝
Երեւան-10, Վռամշապուհ արքայի (նախկին Ամիրյան փողոց) 2/8 (1-ին հարկ), հեռախոս 56-59-74, 56-07-41, 56-37-25:

PUBLISET



KILIKIA TOUR

Եթե Դուք գերադասում եք անհատական տուրիզմ, ապա «Կիլիկիա-տուր» ֆիրման պատրաստ է Ձեզ օգնելու: Մենք կպատրաստենք Ձեր ելքի փաստաթղթերը ամենակարճ ժամկետում:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

Մեր հասցեն
Սայաթ-Նովայի պող.,
«Անի» կինոթատրոն,
7-րդ հարկ, հեռ. 594-370

KILIKIA TOUR



ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԾՐԱԳԻՐ «ԲՆԱԿԱՐԱՆ-94»

ԲՆԱԿԱՐԱՆ - ԿԵՍ ԳԼՈՒԽ

ՀԱՎԱՏ ապահովագրական բաժնետիրական ընկերությունը

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՐՍԱՅԻ եւ «ԱՐՄԵՆԲԱՆԿ» բաժնետիրական բանկի հետ համատեղ իրականացնում է «ԲՆԱԿԱՐԱՆ-94» ինվեստիցիոն ծրագիրը:

ՑԱՆԿԱՑՈՂՆԵՐԸ՝ ՄՈՒԾԵԼՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՄԻՆՉԵՏ 50 ՏՈԿՈՍԸ, ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՐՍԱՅԻ բրոկերային գրասենյակների միջոցով

ԿՂԱՌՆԱՆ ՄԵԿ, ԵՐԿՈՒ ԿԱՄ ԵՐԵՔ ՍԵՆՅԱԿԱՆՈՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ:

ՁԵՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆ Է «ԱՐՄԵՆԲԱՆԿ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԲԱՆԿԸ ԵՎ «ՀԱՎԱՏ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ:

ՀԱՎԱՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Ք. Երեւան, Նալբանդի 22, 1 հարկ
Հեռ. 25-47-93, 25-47-92 Ֆաքս (8-8852) 25-49-95
Տելեքս 243128 AGENT SU
Հեռագիր 243116 ԱԳԵՆՏ


Լուրերի Հոսք

## Շահույթ բանկացման հաշվին

Սանկտ Պետերբուրգի «Սեւզամմեթել» արտադրական միավորման մասնաճյուղերի մեծամասնությունն աշխատում է առնվազն 50 տոկոս շահույթով: Բարձր շահութաբերությունն ապահովվում է արտադրանքի գների բարձրացման հաշվին: Այսպես, մեկ աթոռն արժե 3-4 հազար ռուբլի, բացովի բազկաթոռը՝ 21-40 հազար, փափուկ կահույքի լրակազմը՝ 160-180 հազար ռուբլի: Սնարտ

## «Ֆիլիպ Մորիսը» Լիտվայում

Կալիֆորնիայի ծխախոտի ֆաբրիկայի կոլեկտիվը վերջերս հանդիպում ունեցավ նոր տերերի՝ «Ֆիլիպ Մորիս» վերազգային ընկերության ներկայացուցիչների հետ: Հանդիպման ժամանակ բանվորներին հայտնեցին Բալթյան պետություններում Արեւմուտքի այդ ամենամեծ նախագծի մասնակցությունները: Ամերիկացիները 40 մլն դոլար են ներդնում նոր ձեռնարկության շինարարության մեջ, որը 3 տարվա ընթացքում կփոխարինի հինին: Սնարտ

## Ներկայացվել է «ԻԼ-96 Մ» օդանավը

Մոսկվայի Իլյուշինի անվան նախագծային բյուրոյում մարտի 30-ին ներկայացվեց ռուսական «ԻԼ-96 Մ» օդանավը, որը հանդերձավորված է ամերիկյան «Փրաթ ընդ Ուիթնի» ընկերության 4 շարժիչներով: Գլխավոր կոնստրուկտոր Գենադի Նովոժիլովի խոսքերով, օդանավն առաջին թռիչքը կկատարի այս տարվա ապրիլին, իսկ թռիչքային փորձարկումների լրիվ ծրագիրը կտեւի 2 տարի: Լայնիրան ինքնաթիռի սերիական թողարկումը նախատեսվում է սկսել 1995 թ.: «ԻԼ-96 Մ»-ը կարող է վերցնել 318 ուղեւոր եւ առանց վայրէջքի թռչել 11500 կմ: Այն կարող է նաեւ հարմարեցվել բեռնափոխադրումների: Առայժմ 30 մեքենայի պատվեր է ստացվել Սերոֆլոտից, «Ուզբեկիստան ռուեյզ»-ից եւ «Հեռավորարեւելյան ավիաընկերություն»-ից: Սնարտ

## Ներում է շնորհվել 1682 դատապարտյալների

Մարտի 31-ը (Իրանական Ֆարվարդին 12-ը) Իրանի իսլամական Հանրապետության օրն է: Այդ օրվա առթիվ Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ այաթոլլա Խամենեին, Իրանի դատական իշխանության ղեկավար այաթոլլա Մուհամադ Յազդիի առաջարկությամբ, 1682 դատապարտյալների, որոնց մեղադրանքներ էին ներկայացրել Իրանի հեղափոխության եւ քաղաքացիական դատարանները եւ ռազմական ատյանները, ներում շնորհեց, համաձայն Իրանի սահմանադրության 111-րդ հոդվածի 11-րդ կետի:

## Տաշքենդում ձերբակալվել են դրամանենգները

Տաշքենդի միլիցիային հաջողվել է բռնել մի խումբ դրամանենգների, որոնք իրացնում էին կեղծ 1000 ռուբլիանոցներ: Ինչպես արդեն տվեց ենթադրությունը, դրանք պատրաստվել են Սանկտ Պետերբուրգում: Նրանցից առգրավվել է այն սարքը, որով տպվել էր 700 կեղծ թղթադրամ: Սնարտ


Հիմնադիր եւ խմբագրակից «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՅԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple* Macintosh* համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Թերթի ծնողները եւ տարեցները հրդեհակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱԹՅԱՆ

Ստորագրված է տպագրության 1.4.1993

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արամյանց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 36 000 Պատվեր 1481


digitised by A.R.A.R.@